

Մ Ի Օ Ն

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՉԳԵՅԻՆ, ԴԵՆՍԻՐԿԸՆ, ԳՐԵԳԻՏԿԸՆ
ԷՒ ՔԵՂԵՔԿԸՆ

ՀՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐԳԸՆ ՄԻԸՄԵԸՆ.



ՅԵՐՈՒՍԱԼԻՄ

Ի ՏԳԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1869

ԱՆՈՒԱՆԻՔ ԲԱՃԱՆՈՐԴԱՅ

ԱՄՆ. Տ. Տ. ԵՍՍՅԻ Սրբազան Պատրիարք (6 օրի) :
Գեղ. կաթաղան Արքեպիսկոպոս Աւագ Բաղարար :
» Եակոբ Արքեպիսկոպոս (2 օրի) :

ԱՆԻՔՍԱՆԻՐԱԳՈԼ

Տէր Եակոբի աւագ քահանայ կոտանեանց :

ԱՂԵՔՍԱՆԻՐԻԱ

Աշգեան մահտեի Յակոբ աղա :
Գրիգորեան Սարգիս էֆէնտի :
Գ. Եւսուֆեան Աղջբասնցըր աղա :
Չարեան կարապետ աղա :
Խաչատեան մահտեի Եակոբ աղա :
» Ակնայ Աղջափրական Ընկերութեան :
Հալաճա Ղիվանի Գրիգորեան :
Եակոբեան Բաղարար աղա :
Ճեփաճեան Գաւառիկ աղա :
Սկրասեան Գարրիէլ աղա :
Սէֆերեան մահտեի Պօղոս էֆէնտի :
Տէր Գառարեան Ղազարոս աղա :

ԱՆՏՈՒՔ

Քեօնեան Սարգիս աղա Արապկերցի :

ԱՏԱԲԱՋԱՐ

Եղիանեան Մնացական աղա :
Թապալեան մահտեի Խաչատուր ձղա :
Կոբլեան մահտեի Սահակ աղա :

ԱՖԻՕՆ ԳԱՆԱԳՈՐԾ

Վարդանեան Իրիգոր աղա :

ԲԵՆԻԱ

Աճեման Միքայէլ աղա :
Բրուտեան մահտեի Մամա աղա Արապկերցի :
Գալլընը Եփրեմեան Գրիգոր աղա :
Գալանեան Գեորգ աղա :
Գալուստեան Օհան աղա Բամթեցի :
Եկանեան Էլլարը Սեդրոս աղա Արապկերցի :
Եփեմեան Եկարեմ աղա Բամթեցի :
Գարապետեան Միստոս աղա Արապկերցի :
Դեմեան Սկրիպ Բարսեղ :
Էմմանուէլեան մահտեի Աստուածատուր աղա :
Սաղաթեմեան մահտեի կարապետ աղա Արապկերցի :
Տէր Գրիգորեան մահտեի կարապետ աղա :
Տէր Խաչատուրեան մահտեի Սարգիս աղա :
Տէր կարապետեան Սարգիս աղա Բամթեցի :
Տէր Մարգարեան մահտեի Նիկողոս աղա :
Տէր Եակոբեան Վարդան աղա Բամթեցի :
Տէր Սահակեան մահտեի Եփեմեան աղա :
Քիւրքեմեան Զամանեան էֆէնտի :

ԳԱՆՁԱԿ

Արթ. Եակոբ վարդապետ տէր Աւետիքեան :

ԴԱՄԵԱԳՈՍ

Արթ. Բաղնափա վարդապետ տեսուչ :
Թերեզիպեան Թորոս աղա :
Դարանեան Գեորգ աղա Չիլիկեզի :
Թիւրպոլեան Գարրիէլ աղա Մաշկերցի :
Խաչմեքարեան մահա, Եղաթեմեան աղա Սաղմեցի :
Միստուրեան Մարտիրոս աղա Տիգրանակերտցի :
Մանուկեան Թափաշէլ աղա Մաշկերցի :
Փաստըմեանեան Սարգիս աղա Նուր Գարդապետ
աւակերտեց :
Թալէ Սարգիս աղա Արապկերցի :
Գեօրգիւսեան Գեորգ աղա Միսի :
Գեօրգիւսեան Եակոբ վարդապետ :

Սարգիսեան Մարտիրոս աղա Ժիւլիէ Մալախիան :
Ասու մասեր Ընկերութեան :

ԵԳԻՊՏՈՍ

Արթանապետի. Միքայէլ վարդապետ :
» կարապետ վարդապետ :
Գալիպեան մահտեի Նեմուր օրիորդ Պօղոս :
Կապարով Միսեմ աղա Զմիւռնացի :
Կարապետեան Պօղոս էֆէնտի :
Նուր Խորենեան վարժարան :
Ռաֆայելեան Գեորգ Պէյ :

ԵՐԶԵԱՅ

Քիւրս օղլուան մահտեի Գրիգոր աղա :

ԵՐՈՍԱՆԵՄ

Վեմափաշ Նալիք փաշա կառավարիչ քաղաքի :
Արթանապետի. Վրժանեան վարդապետ :
» Պեարոս վարդապետ :
» Եղիէ վարդապետ :
» Խաչատուր վարդապետ :
» Ներսէս վարդապետ :
» Ներսէս վարդապետ :
» Աստուածատուր վարդապետ :
» Իգնատիոս վարդապետ :
» Խորէն վարդապետ :
» Մեարով վարդապետ :
» Թադէոս վարդապետ :
» Բարդուղիմէոս վարդապետ :
» Անդրէաս վարդապետ :
» Եղիկէ վարդապետ :
» Եղիա վարդապետ :
» Եակոբ վարդապետ :
» Մովսէս վարդապետ :

Սարգիս աղա Սահակ Պօղոս :
Մարգարեան Գալուստեան աշակերտ Ժառանգաւորաց
դպրոցի :

Բրուտի Զեփաղառա Պ. Պետերման :
Մարտուան Բարսէլ Եակոբ աղա (2 օրի) :
Խաչատուրեան Եակոբ աղա :
Մալեփեան կարապետ խաչ :

ԵԴԵՍԱ

Գալանտարեան մահտեի Գրիգոր աղա Ակնայ :
Լուսաւորեան Ընկերութիւն :
Լուսաւոր. Ընկ. Գիւլիպիլի ուսանողք :
Պասմանեան մահտեի Պաղատար աղա :

ԵՐԵՒԱՆ


Տէր Անտոն Աւագ քահանայ Էփեմեան :
Տէր Եակոբ քահանայ Մեղիկեան :
Քերիմով մահտեի Եղիշապ աղա :

ԵՆԻՈՒԿԱ

Առաջնորդ Էլլարի աղա. Եակոբ վարդապետ :
Չարեմեանեան Գրիգոր աղա :

ԶՄԻՌՆԱՅ

Աղաճանեան Ստեփան աղա :
Եսայեան մահտեի Եակոբ աղա :
Մ. Էփեմեան Խաչատուր աղա :
Մարտուան Եակոբ աղա :
Մեարապեան վարժարան :
Չեմեմեան Բարսէղ աղա :
Չիլիկեան Գրիգոր աղա :
Չիլիկեան Եակոբ աղա :
A.R.A.R. @



Մ Ի Փ Ն

ԶԱՐԲԱՐԳ՝ ՏԱՐԻ
ԹԻՒ 3.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՄԱՐՏ 31
1869.

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Բ. Ա. Ն. Ա. Ս. Ի. Ր. Ա. Կ. Ա. Ն. Ե. Ի. Գ. Բ. Ս. Ա. Կ. Ա. Ն.

Ժ Ո Ղ Ո Վ Բ Դ Ա Յ Ի Ն Կ Բ Թ Ո Ի Թ Ե Ի Ն

Գ.

ԳՐԻՍՏՈՆԵՌԻԹԻՒՆՆ ԻՐԲԵՒ
ԴԱՍՏԻԱՐԱԿԻԶՊ

Ի՞նչ թէ երախտագիտութիւնն
ինչպէս կը վերածնէ զհոգին . այս մա-
սին կարեւոր է խորհիլ նախ և առաջ
թէ ի՞նչ յատկութիւն ունի երախտա-
գիտական զգացումն : Երախտագի-
տութիւնն մի յայտնի և անշահախն
գիր զգացմունք է , որուն ընդունակ է
մեր ճշմարիտ բնութիւնը , և այս պատ-
ճառաւ երախտագիտութիւնն գիւ-
րաւ կարող է յենարան լինիլ մեր բա-
րոյական վերածննդութեանը : Սարգ-
կային ազգի փրկագործութիւնն ի՞նչ

ունի (Յիսուսի Վրիստոսի մի գերբնա-
կան ցնցումն առաւ մեր երախտա-
գիտական զգացմունքին և անտահա-
թաիչ , և այս ճանապարհաւ սկսաւ մեր
բարոյական վերանորոգութեան գոր-
ծը : Ստանի . յայտնի է որ երախտա-
գիտութեան էական յատկութիւնն է
մարդը միացնել երախտագիտութիւն
գարթուցանող առարկայի հետ : Ե-
րախտագիտութիւնը կը համակերպէ
և կը նմանեցնէ զմեզ մեր բարեբաղին
և կը կատարեչագործէ զմեզ , եթէ մա-
քուր է և անաբաւ , իսկ եթէ ոչ , մեր
փառթարութիւնը երեւան կը հանէ :
Վա լստուած ունեցած ճշմարիտ ե-
րախտագիտութիւնը կը մտնեցնէ ըզ-
մեզ երկնաւոր չօր որութեանը և կը
պարտաւորէ զմեզ ճանաչել քառա-

Պատկերացումները տեղ թիւ 11. 1868 թ.

Թեան պարզեւիչը և յիշել, Վերջապէս, մենք որ աղքատ ենք և կարող չենք Վստուծոյ մեծամեծ պարզեւաց փոխարէնը հատուցանել, ինչպէս կաբող ենք մեր շնորհակալութիւնը յայտնել, եթէ ոչ մեր սիրտը Վստուծոյ նըւիրելով, և ինչպէս կարող ենք նուիրել առանց սիրելու՝ ինչ որ Վստուած կը սիրէ, առանց ատելու՝ ինչ որ նա կ'ատէ — առանց սիրելու բարին և առանց ատելու չարը։ Վստե՛ ահա հոգւոյ տրամաբանութիւնը։ Վստե՛ մաքանութիւնը ամենեւին խաբող չէ, և աւելի ապահով է քան մտքի տրամաբանութիւնը։ Սա ամենեւին սխալ հետեւութիւններ կամ եզրակացութիւններ չունի. վասն զի սխալ հետեւութիւններէ կը խորշի և երբեք կարող չէ սիրել։

Այն տեսակ բարերարութենէ շարժուած և գէպի այն օրինակ անշուքական բարերար մի ուղղուած երախտագիտութենէն բնականապէս կը ծագի ամեն բարոյականութիւն՝ անհատական, մասնաւոր և ընդհանուր։ Բարոյականապէս անկարելի է, որ բարերարութեանը հաւատացողը իսկապէս երախտագետ չլինի։ Սեր խօսքը առաջ բարեպաշտներու համոր չէ։ Վստուած խաչի վրայէն անհուն բարոյականութիւն ուսուցանելէն զինի՝ օրինակները բացատրած է միանգամայն և Վստարանի մէջ։ Վստարանի մէջ ակներեւ կը տեսնենք նոյն կապակցութիւնը և գրական կատարելութիւնը, ինչ որ հիմն է փրկագործութեան։ Վստարանի բարոյական ուսմանըք առմեն դրութիւններէ կատարելագոյն է և վճռական։ Ինչպէս որ աղքերակի ջուրը մէկ մղումովն, բայց հողերուն և զառիվայրերուն համեմատ կը բաժանի և կը վերաբաժանի փայտէս և աւետարանական բարոյականութենէն։

Ճշմարտութենէն, առանց դժուարութեան, կը բղխին և կ'իջանեն մասնաւոր Ճշմարտութեանց հաղորաւոր ուղիներ և կը պատշաճին իւրաքանչիւրն իրեն առարկային։ Թէ՛ անհատ, Թէ՛ գերդաստան և Թէ՛ քաղաք կը կանոնաւորին և կը հաստատին մի և նոյն խորհուրդներու և սկզբունքներու մէջ։ Վստարանի բարոյականը ջուրի նման է, որ այն գտնաւթի ձեւը կը ստանայ, որուն մէջ լցուած է։ Նա միշտ ճշմարտութիւն է, սէր և արդարութիւն առ անձն, առ գերդաստանն և առ հայրենիքն։ Վստեւին չղկայ Վստարանի մէջ այնպիսի պատուէր, որ չը վերաբերի փրկագործութեան սիրող բունքին։ Բարոյականութեան գլխաւոր գաղափարը ամփոփուած է՝ անաբատ Վստին քաւիչ զենման մէջ, և մարդկային կենաց և ընթացից ուղիչ գիծերը կամ շառաւիղները բոլոր կը ծագին Խաչի կեդրոնէն։ Ուր արգարութիւնը և ողորմածութիւնը զիրար համբուրեցին։ Վստաւածային անհատ սիրելիութեամբ կատարուած գործը կ'ընծայէ մարդկութեանը ամեն բարոյականութիւն։

Ինչպէ՛ս երկար խօսինք Վստարանի բարոյական վարդապետութեան վրայ, քանի որ հակառակող կամ չարախօսող չլիայ։ Սմանք միայն պատճառ կը բերեն Թէ՛ Վստարանի բարոյականը դժուարին է և անգործագրելի, բայց այս աւելի պատիւ է Վստարանին, վասն զի դժուարութիւնը միայն չը կամեցողներու և չգործագրողներու համար է։ Յիսուսի ընթերցողը է և բեռն փոքրիկ միայն նոցա համար, որոնք ընդունած են նորա Հոգիէն այս հաւատը, որ է Յոլմաթիան աշխարհի։ «Վստեանայն որ Վստուծոյ ճնեալ է՝ յաղթեաշխարհի։ Եւ այս է յաղթութիւնն միւրոր յաղթէ աշխարհի՝ հաւատքն

մեր Գ. Յով. Ա. Ի. Ե. 4. Այսպիսեան համար չք կայ մինչեւ անգամ լուծն և բեռն, վասն զի իրենց հնազանդութիւնը կամաւ է և սիրով, որով բարձրաթիւ թիւ եր կ'ըստանան վերապահարաւ, կամ այսպէս ստենք, կը կրուին քան թէ կը կրեն. Ս. որ սա աւաճային շնորհաց և փրկագործութեան համարու մը տարածուած է, այն տեղ մեծ ազդեցող թիւն ունին հաւատար, սէրը և ուրիշութիւնը և Հատ տեղ գեռ Վրիստոնէութիւնը իւր բոլոր զօրութեամբ և գունով ճանաչուած չէ, բայց աստուածային քաղաքութեան, բարութեան և նախախնաւ ժողովեան սիրայ աղօթ գաղափարներ ունեցողներն անգամ աւելի բարոյական ծանօթութիւններ ունին, քան թէ նախնի հեթանոսութիւնը և Այս խօսքը « Եթէ նորա հանգերծի քղանցին մերձեանամ, կը բժշկուիմ » գտցես կ'ամփոփէ իր մէջ քրիստոնէութեան սգին և վասն զի Վրիստոսի հանգերծի քղանցը այն կեանքը կը տարածէ քրիստոնէից մէջ, զոր բոլոր աշխարհի գիտութիւնը կարող չէ տարածել :

Ս. բերմն այն մարդիկը, որ կը կարծեն թէ քրիստոնէական բարոյական ծովութիւնը պիտւարին է և չէ կարող ընդհանրանալ ժողովուրդի մէջ, շատ կը սխալեն և Վասն զի, քրիստոնէական պատուէքներու կատարումն գերբնական մտաւ որ մշակութիւն չը պահանջեր և Վասն զի, երախտագրութիւնը մեծ գիտութիւն չը պահանջեր և Վասն զի մարդկային փրկագործութիւնը և անակնկալ ազատութիւնը զգալու և ուրախանալու համար կարեւոր չեն մըտաւ որ ճգունք և հետազոտութիւնք Վրիստոնէական կրօնքը, որ ըստ ամենայնի բարոյականութիւն է, և այս բարոյականը, որ բովանդակ կրօնք է, մէկ կը միւսով կը մեկնուին և Վրիստոնէական կրօնքի զինու. թիւնը կարող է փոխադրուի որչաք զբաւել, բայց իմաստը զիւրամատչելի է դեռահաս մանուկին անգամ և յոր մանկան ընդուն բացուի և գունչակէ որ անմահ հիւր կը բնակի իր կաւեղէն շինուածոյն մէջ, երբ նորա բարոյական բնութեան աւաջին սերուն ճեղքուի և սկսի բողբոջիլ, աուէք մանկանը իւր Փրկիչը և նա արդէն կարող է ընդունիլ և Վսեմ ճշմարտութիւնները կարող են արդէն նորա աւաջին աշխատանքը գրաւել և մտածութեան նիւթ մատակարարել և Վսեմութեան և շնորհաց լոտուածը իսկոյն հասկանալի կը լինի մանկանը և իւր կենաց աւաջին արշալուսէն կը սկսի սիրել այն Փրկիչը, որ այնքան սիրեց անմեղ մանուկները, Վհ, ինչքան հրաշալի է քրիստոնէական կրօնի յատկութիւնը, ինչ խորութիւն և ինչ պարզութիւն և Վրիստոնէական կրօնքն է մի ուղիւնոս, նա է մի վտակ, փիղը կը ըլլայ նորա մէջ և գաւը հունէն կ'անցնի, պարզ աւան, իմաստասէրը կը խորատուի և մանուկը կ'անցնի :

Վստուած կը յայտնէ մեզ իւր կամքը և նախախնամական վարչութեան օրէնքները ոչ թէ չոր ու ցամաք գլխուններով, այլ իբրեւ և գործով և Վստուծոյ պարգեւած գիրքը ընդհանուր գիրք է յորում ամենայն ինչ արեգիկական է և Վյս գիրքը մի կողմէն մտախոհութեան նիւթ կը մտաւարարէ փոխաւ փայլի և միւս կողմէն հասկանալի է մանուկին և Հատ անգամ մատենագիրները կը ջանան ճշմարտութիւնները գեղեցիկ և անուշ ձեւերով բացատրել, որպէս զի մանուկները ընդունան հասկնան և Վյս նկատմամբ և Վստուածաշունչը մանկանց միակ ուսուցիչն է և Վյսայի քաղք է այս բաւական եղբերը, որ մանուկը բնաւ երբէք գաղաւթութիւն չը գտնէր և Վստու-

ստեան կրօնքի զինութիւնը կարող է փոխադրուի որչաք զբաւել, բայց իմաստը զիւրամատչելի է դեռահաս մանուկին անգամ և յոր մանկան ընդուն բացուի և գունչակէ որ անմահ հիւր կը բնակի իր կաւեղէն շինուածոյն մէջ, երբ նորա բարոյական բնութեան աւաջին սերուն ճեղքուի և սկսի բողբոջիլ, աուէք մանկանը իւր Փրկիչը և նա արդէն կարող է ընդունիլ և Վսեմ ճշմարտութիւնները կարող են արդէն նորա աւաջին աշխատանքը գրաւել և մտածութեան նիւթ մատակարարել և Վսեմութեան և շնորհաց լոտուածը իսկոյն հասկանալի կը լինի մանկանը և իւր կենաց աւաջին արշալուսէն կը սկսի սիրել այն Փրկիչը, որ այնքան սիրեց անմեղ մանուկները, Վհ, ինչքան հրաշալի է քրիստոնէական կրօնի յատկութիւնը, ինչ խորութիւն և ինչ պարզութիւն և Վրիստոնէական կրօնքն է մի ուղիւնոս, նա է մի վտակ, փիղը կը ըլլայ նորա մէջ և գաւը հունէն կ'անցնի, պարզ աւան, իմաստասէրը կը խորատուի և մանուկը կ'անցնի :

անային բաժակի մէջ ամենայն ինչ
մեղր է : Ի՞նչ արտաշարժ և գրաւիչ
Վիրք : Ի՞նչ սիրուն պատմութիւններ
ի՞նչ զմայլեցուցիչ պատկերներ : Ի՞նչ
այնպէս խառնուած է վեմականը գե-
ղեցկի հետ և գեղեցկիւր վեմակա-
նին հետ : Ի՞նչ այնպէս գրուած է բա-
րոյականը գործնականին մէջ : Եւ
գիրքն է բովանդակ պատմութիւն
դաստիարակութեան , գաստիորակու-
թիւն ընդարձակ և գերազայն վասն
հասնւոր մարդկային ազգի : Շնորհոց
առաջին սողէն մինչեւ Հովհաննու-
յայտնութեան վերջին սողը մի ան-
հաւն գեղեցկութիւն ունի , զեղուն
բարոյական կերակուրով , յորմէ մա-
նուկը իրեն համար անդարար կաթը
և ծերը հաստատուն կերակուր կը ծա-
շակեն : Սուրբ գրքով դաստիարակուած
մանուկը աւելի շատ ճմարտութիւն-
ներ գիտէ քան թէ հին աշխարհի ի-
մաստունները :

Երբ եթէ կամիք որ մարդիկ իրենց
Փրկիչը սիրեն , մանկութենէ ծանօ-
թացուցէք նոցա Փրկիչը : Սանուկ
հասակէն բերէք խաչերոյն մօտ և պատ-
մեցէք նորա անհուն սէրը : Պատմե-
ցէք , որ սիրեց նա մանուկները ծննդ-
գեան օրէն : Պատմեցէք , որ իրենք
անհովիւ և անփարսխ իւրիշ գառ-
նուկներ էին , և նա եկաւ գտնելու ա-
նապատին մէջ և իւր արիւնը թափեց
որ երկնային փարախը մտցնէ : Սի վախ-
նաք պատմելու մանուկներուն իրենց
թշուառութիւնը , իրենց բնական ա-
պականութիւնը և ողորմութեան ու-
գթութեան կարօտ լինելը : Սի վախ-
նաք պատմելու , վասն զի , նոքա կը հա-
ւատան ամենայն սիրով , և աւելի լաւ
քան թէ Փրկիչութիւնները , վասն զի ման-
կանց խիղճը ափէ և այ՛ կ'աւելայ խօս-
քերուն , որով իրենք կը մեղադրուին ,
որովհետեւ նոցա լսողութիւնը տակա-

ւին անարատ է ու ժողովրդ : Վասն զի
մանուկները առիւտին շատախօսու-
թեան և իմաստակութեան հետաճո-
ւած չեն : Եւ ի՞նչոցեք այս մատաղ
տունկերը ճշմարտութեան մէջ և
Տարուէ տարի մատակարարեցէք աւելի
հաստատուն կերակուր : Ս անպէք որ
նոցա հաւասար աշի իրենց իմացակա-
նութեան հետ և իմացական յոռաշնա-
գիմութիւնը իւրաքանչիւր քայլտիւ-
խին մէջ տւելի և աւելի զօրանայ առ-
տուածային իմաստութեամբ : Պատ-
րատեցէք նոցա համար համզման
դրամագլուխ , քրիստոնէական փորձեց
և օրինակներ , բարեպաշտական սովու-
րութիւններ , քաղցր և վեճմ յիշու-
տակներ այն վստ օրերուն համար ,
որոնք երիտասարդական կրքոտ և
ամբարտաւան հասակին մէջ կարող են
պատահիլ : Եւ ապաքէն այս ընթացքը
անշուշտ ազդեցութիւն պիտի ունենայ
մանկան վրայ ապագային մէջ : Եւ եթէ
պատահի երբեմն սխալիլ և մարտիլ , յու-
սարիէ որ շուտով դառնայ գէպի այն եղ-
րը , ուր պատուարուած էր իր ման-
կութիւնը : Վրիժէք արդեօք , թէ ինչ
դժուարութեամբ կը թափանցէ քրիս-
տոնէական ճշմարտութիւնը այն կարծր
կեղծէն , զոր կը պատեն և կը թանձրա-
ցնեն մեր արտին շուրջ աշխարհիս վստ
օրինակները , վայելքները , ունայնու-
թիւնները և սուտ իմաստութիւնը :
Եւ շատուցէք ուրեմն նախ քրիստոնէ-
ութիւնը մտցնել և հաստատել սրտին
մէջ , քանի որ աշխարհի կեղծներով
կարծրացած չէ : Փրկիչը ասաց . Թող
տուէք որ մանուկները իմ մօտ գան ,
զգաստ խոսէք ոչ միայն թոյլ տալու ,
այլ և առաջնորդելու Խառն և
յանձնելու նորա պահպանութեանը :
Երբեք քանի կան խօսելու քրիս-
տոնէական դաստիարակութեան եղա-
նակի վրայ միջոցներու վրայ , և վարժա-

բանաց մէջ այն սկզբունքը արմատաւոր
պրնելու վրայ, բայց չենք ուզեր մեր
խոսքը շատ երկարել:

Կարծեմ բաւականին պարզեցինք
Լ. Ն. Կոպտանի գաւառաբանի վարու-
թիւնը և կրթութեան գերազանցումը
թիւնը և ժողովրդական յատկութիւն-
նը և յարմարութիւնը և մանաւանդ
մանկանց առաջնորդելու բարոյական
ազդեցութիւնը: Սէր պատճենեա-
րը կը յանձնենք այն ամեն բարեմիտ
ներս: Առաջագումարեանը և որոնք ժա-
ղովրդային կրթութեան վրայ կը խոր-
հին: Իսկ մեր համոզումն այն է, որ
ժողովրդի բարօրութիւնը և հանգա-
գութիւնը կրօնական և քաղաքական
ճշմարիտ համոզման մէջ է, և այս հա-
մոզումները միայն քրիստոնէական ուս-
մունքէն կարելի է սպասել, վասն զի
միայն քրիստոնէութեան մէջ կ'անփո-
փին: Եւս յայտնաւ կրօնի բերրի հո-
ղին վրայ միայն կարողեն աճիլ և պլու-
զագործիլ այն զգացմունքները, որոնք
չորացան երբեմն բնական օրինաց կոշիկին
վրայ: Սիսյն քրիստոնէութենէն կա-
րեն երեւան գալ, իրենց բոլոր ծնուն-
դական զօրութեամբ, հաւատաւ Լյո-
տուած, օրէնք պարտուց և յոյս ան-
մահ ապագայի: Սէր 19րդ դարու թէ
պէտ այնչափ դժուր է, որչափ Լեւոնա-
ներու գարնապայն բարոյական հաւա-
տայնաց մեծ կարօտութիւնն: Եթէ
հռովմէական կայսերաց օրով փութած և
տխտացած մարդկութիւնը վերածնաւ
և մանկացաւ Լեւտարանի հովանւոյն
տակ, եթէ նորափետուր զարդարեցաւ
իրբն զարծուի (Լյայի է. 31), եթէ ա-
մեն տեղ և ուր սր Լեւտարանը քարո-
զուեցաւ, մարդկութիւնը թարմութի
և երիտասարդական գեղեցկութիւն
ստացաւ, եթէ մեր օրերուն մէջ ան-
գամ կը տեսնենք, որ քրիստոնէութիւն
հոգւով և ճշմարտութեամբ գրկողնե-

րը նոր արարածներ կը լինին, Բնագետ
կարող ենք ուրեմն ջիւտատուանի, որ
քրիստոնէական դատարարութիւնը
կարող է նոր արիւն և աճեցուն ա-
ռողջութիւն ընծայել մանկանց և հե-
տեւապէս ժողովուրդը առաջնորդել
ճշմարտութեան և լուսոյ ճանապարհ-
հաւ:

Ի և

ՔՐԻՍՏՈՆԵՆԻԹԻԿԵՆ ԻՐԲԵՆ ԿՐԹԻԶ

Թիւր ընթերցողը չըզարմանան մեր
խորհրդածութեան վերնագրին վրայ և
Սէր զի կամինք ասել թէ քրիստոնէ-
ութիւնը բաւական է միայն ամեն
կողմէն իմացականութիւնը մշակել:
Եւս կամինք ասել, որ քրիստոնէ-
ութիւնը մտաւոր մշակութեան ա-
մեն միջոցներու վրայ կը յաւելու-
ութիւն նորագոյնը, զոր սիրտի բացառ-
ութեա ներկայ գլխայն մէջ է: Ինչ որ կը
տիրէ սրտին, նայնը կը տիրէ և մտքին:
Եւս զգացմունքն որտե՞ր ունի իրեն հա-
մապատասխան գաղափար մտքի: Եւս
չա՞ն որ կը շարժէ մեր սրտի խորքը
նմանապէս կը զարթուցանէ մեր մէջ
մտաւոր զօրութիւն: Իմաստասէրնե-
րէն մէկը կ'առաջարկէ միտքը մշակել
սրտի յօժարութիւններով: Վասն զի
սրտի յօժարութեան կամ բաղձան
քէն աւելի լաւ կ'իմացաւ թէ Բն-
բանի ընդունակ է մարդոս իմացակա-
նութիւնը: Իմաստասէրի պատուէրը
խեղապէս փրկիտիպական է, որովհե-
տեւ կամ այնպիսի օրինաւոր կրթե-
ր և բաղձանքներ, որոնց զարգացումը կա-
րող է մարքեղ սիրտը, աշուտայնե-
ղա միանգամայն իմացականութիւնը
զարթուցանել: Եւս միտք, այս նկատմամբ
լինել, ինչպէս քրիստոնէութիւնը և
Եւս կրթ և յօժարութիւն կ'առ-
ջէ մտքին, բայց անհաւասար կերպով

նայելով բնութեանը և առարկային :
Վարդգուծիւնը զօրացնելու համար
հարկ է որ ոչ միայն յօժարութիւնը
հզօր լինի, այլ և առարկան մեծ : Հարկ
է որ առարկան ընծայէ մօրին ըմբռ-
նումներ, գեղեցիկ խորհուրդներ և
գարծունէութեան առիթներ : Հարկ
է որ առարկան այնպէս լսեմ ու կեն-
դանի լինի, որ բոլոր սիրտը գրաւեւէն
յետոյ՝ միտքն եւս գրաւէ : Հարկ է
որ զգացմունքէ արթնցած խորհրդա-
ծութիւնը այնչափ խոր փորէ մտաւո-
րական աւազանը, որ մտքի հոսանքնե-
րը չը խաւափին եղբրքներէն :

Վստայէս է քրիստոնէութիւնը իւ-
քանչիւր անհատի համար : Կարող ենք
համարձակ ասել, որ քրիստոնէութիւն
նր կը յեղափոխէ մեր բոլոր իմացական
կարողութիւնները և գերբնական թը-
ռիչներ կը տայ : Վրիստոնէական մա-
քուր զգացումն զօրութեան վրայ զօ-
րութիւն կը յաւելու : Վմեն հանձար
կամ տաղանդ միշտ կը շահի և կը բեղ-
մնաւորի բարոյական զգացմունքի ար-
ծարծումէն : Վարոյական սթափումն
կամ յարութիւնն կը յարուցանէ նմա-
նայէս ամենաթմրած իմացականու-
թիւնն անգամ : Շատ հասարակ մար-
դիկ կրօնական զգացման շնորհիւ նշա-
նաւոր եղած են մտաւորական յատա-
ջադիմութեան մէջ : Վթա, որ բնդու-
նակութիւններէ զրկուած կը կարծու-
էին, յանկարծ լեզուները բացուեցէ,
գեղեցիկփոստութիւնը յօղայցեր, սրա-
մտութիւնը արծարծուեց և դատա-
զութիւնը նրբացեր, այնպէս որ նոցա
առաջին մտաւորական աղբատութիւ-
նը տեսնողները զարմացեր են այս ար-
դասաւոր փոփոխութեան վրայ : Պարզ
ուեստութենէ, նրբութենէ և կորովա-
մտութենէ թափուր մարդիկը յան-
կարճ հարստացեր են մտաւոր ճոխու-
թեամբ : Վշտահա փորձը հաւատարմ

է, որ այս մտաւոր արթնութիւնն կը
րօնական զգացմունքէ ծագած է : Վյա-
չափ զօրաւոր է արտի ազդեցութիւնն
մտքի վրայ :

Վթե աւաղորտութեան առնունք
կը տեսնենք, որ կրօնքը մի բնազուն
ցական և հոգեբանական ուսմունք է
ժողովրդի համար : Կը տեսնենք որ քր-
իստոնէական կրօնքը մի ներքին զըն-
նութեան կրօնք է, որ ներքնայէս
կրօնի և կը շարունակի և կը կատա-
լուի : Վրիստոնէի որոշ յատկութիւն
ներէն մինն է տրամաբանել պարտու-
ց վրայ : Ե. ճվ չեզիտէ որ պարտու-
ց տրամաբանութիւնը գեղեցիկացնէ և
մեն տրամաբանութիւններէ : Վջ մի
մարդ կարող չէ ստոյգ ծանօթութիւն
ունենալ պարտու-ց վրայ ինչպէս քրիս-
տոնէայն : Վրիստոնէի կեանքը ունի
յատուկ գեղեցիկութիւն և ճշմարիտ
դաշնակաւորութիւն : Վյողովրդի կր-
թութեան համար աշխատողը պարտա-
ւոր է այս ամենը աչքի առջեւ ունե-
նալ, ապա թէ ոչ՝ իր նպատակին ջը-
հանիր : Վնչպէս ընդ հանուրի, նոյն-
պէս և մասնաւորի : Վնչպէս երիտա-
տարդի, նոյնպէս և մանկան համար
խիստ կարեւոր է կրօնական զարգա-
ցումն, որովհետեւ այս բարոյական
զգացմունքը կը բանայ և կը զօրացնէ
բոլոր մտաւոր կարողութիւնները և
կը հասունայնէ իմացականութիւնը :

Վխտենք այժմ այն գիրքը, որ
գանձարան է դատախարակութեան և
բարոյական վերածնելութեան սիրդ-
բունքներու : Վյա գիրքը, կամ, աւել-
լի լաւ ասել, այս մատենագրարանն է
Վյառաւաճաշունչը : Վրիստոնէութիւնը
պարտք կը դնէ ամեն անհատի վրայ
օգուտ քաղել Վյառաւաճաշունչն : Վյա
ղովուրդ, մանուկ, ամեն հասակի մար-
դիկ կարող են Վ : Վրքի ուսմամբ կա-
տարեալ քրիստոնէայ լինիլ : Վյառա-

ծոյ կամքը կամ՝ ծրագիրը : քրիտոսնէն ութեան նկատմամբ : և անհատներէն դիմել գէպի ընդհանուրը և ոչ ընդհանուրէն գէպի անհատները , և այս պատճառաւ այնպէս կամեցած է , որ պէս զի իւրաքանչիւր որ իր աստուածային ձեռքէն կրօնք ընդունի , իւրաքանչիւր որ իրեն սեպհականէ և իր սիրտը կրթէ Մատուծոյ յայտնած վարդապետութիւններով : որպէս զի իւրաքանչիւր որ իր կողմէն ձայնակցի վերին ձայնին և իր սրտով ընդունած կրթութիւն քաղցրութիւնը ճաշակէ : Մտառածային կամաց և պատուէրին հումեմով : Մտառածաշունչն է մտտեմաւ զարան հանուր մարդկային գերզատանի իւրաքանչիւր անդամի համար : Մտառածային Վրբէն ստացած կրթութեան զօրութիւնը քաջ ճանաչելու համար՝ առնուելով ամբողջական ընդունալովութեան աէր մի մանուկ : Վիտենքթէ՝ որչափ սահմանափակ է նորա մը առածութեան հորիզոնը , որչափ պահաս են նորա համար մտաւոր և բարոյական սթափութեան միջոցները : Չնողները տգէտ են իրեն պէս և միայն վաղուեան սպարուտը կը հուան : Չրկան աչքի տեսութիւնը գրաւող նորանոր առարկայք : Վշտարհի մեծածմեծ տեսարանաց ազդակները կամ շատ նուազ կամ ամենեւին չեն հասնիր նորա ականջը : Նորա անմահ և չարքաշ կենքը չը թաղուր ռարիսական տեսարաններ երեւակայելու , որ քնական է մանկական հասակին : Սիւայն բնութիւնն է նորա գաոտիարակը , ինչպէս և վարդենիին : Մտութիւնն է միայն , որ կը մատակարարէ քանի մի ռամուսներ , կը ձեռաւորէ նորա գաոտութիւնը զգացմունքներով , կը գրծագրէ խիստ խոշոր գիծերով գաստիարակութեան ռարուպիծ մի և անկատար կը թողու : Վրբի առջեւ բե-

քէք մանկան մտքի աղքատութիւնը , բրտութիւնը և անպայաութիւնը , և ապա բացէք նորա առջեւ դպրոցը , որ կարողալ սովորի և Մտառածաշունչ կարողալ : Մտառածաշունչը նորա համար գրաւած է , լեզուն նորա սրտին հետ կը խօսէ : Վշտառ մանուկը , որչափ խնամքով ուսուցանես , աւելի գիրք կարող չէ այնպէս հասկնալ ինչպէս Մտառածաշունչը :

Վրբ՝ Սուրբ գրքի լեզուն , որ աղքատիկ մանկան լեզուն է , որ բնութեան բարբառն է , կը յայտնէ մանկանը ամենամեծ ճշմարտութիւններ : Սակոյն կը զետեղուի նորա սրտին և մըտքին մէջ բոլոր փիլիսոփայական և բարոյական ճշմարտութեանց առանցքը : Մտութեան և խղճի օրէնքները կը միանան իրենց տեւական կեդրոնին մէջ : Ստափութեան և կենաց ընթացքը կը սկսին միասին : Սակոյն մանկան նայուածքը աշխարհի բարբրիթութուն գէպի աստուածգիրութեան արեւելքը կը դառնայ , կը ճանաչէ զՄտառած , կը ճանաչէ խղճը , կը ճանաչէ պարտուց անփոփոխ օրէնքը : Նրբ միանգամ այս փարսեան լուստոռ աշտարակը բարձրացաւ կենաց ճանապարհին վրայ : այնտե հետեւ մանուկը նորա յատկ լուսով կը գիմէ գէպի այն մեծ նպատակը , որ իշանակութեան է բոլոր մարդկային ցեղին համար : Նա , իբրեւ իմացական և հարցասէր վկայ , կը տեսնէ մարդկային ընկերականութեան նախկին հաստատութիւնը : Նորա առջեւ կը ներկայանան մարդկային սրտի ամեն հիմնական ջանկութիւնները իրենց նախկին անմեղութեամբ և պարզութեամբ : Նրեւակայութիւնը և համակրութիւնն աւելը անխոտոր կը միանան իրար հետ , ընչուութեան սեմէն սկսած մինչեւ յաւիտենականութեան սեմը :

իւնչ փառեցիք դուք, եթէ առաջ
լարեցին Հոմերոսի լիրիկականը և լիրի-
կանը կարգացնելու գործի մասնակ-
ներուն: Այնչափ պիտի փառեցիք որ ա-
ռաւելի հասարակարկերուն պատշաճ է
կարգելը: Իրիստոնէայ մանուկը որդ-
բողէն սկսած՝ կը թղթովէ ամեն լիրի-
կականներէն գերազանց: Այս այնպիսի
կարեւոր ուսմունքն աւելի ընթերցմունք
կը շարունակէ, որ գուցէ դուք հոգ-
աւարտութեամբ միայն պատշաճ լրա-
տեցիք: Այս արդեօք Սուրբ գրքի մէջ
այնպիսի մի բան, որ Հոմերոսի գիւ-
ցականերէն թերեւէ գերազանց և խորա-
գոյն չլինի: Այս աւանդաւորն է ըս-
կիցան Հոմերոսէն առաւել անմատչե-
լի կ'երեւի և ասակայն Աստուածաշնչ-
նով կը սնանի քրիստոնէայ մանուկը:
Այս մի հրաշք է և արանքելի երևույթ,
որ ազգայ ունեցած ամենամեծ պարզ-
մական և փոփոխական յիշատակարանը
կարող է գործի մասնակց գիրք լինի:
յորմէ առաւել քաղցրութիւն կը շա-
ղակեն, քան թէ ուրիշ գրքերէ: Այս
աւանդաւորն է թէ մանկանց և թէ ժո-
ղովորդի համար այնպիսի հրապուրան-
քներ ունի, զոր չունին բնաւ դիւ-
ցական քերթութիւնները: Այս
Աստուածային ընդարձակ և վստահան
քերթորութեան մէջ կը գտնենք մեր
քառ հաւատոյ նախնեաց գործքերը և
վստահար: Առանց դժուարութեան
կը համակերպինք այն նահապետներու
հետ, որոնք իբրեւ աստուծոյ օղեր են
այն մեծ շղթային, որ դուք առ դար
իրար հետ կը թափառէ հաւատաւորեանե-
քը: Կարծես թէ Սոփիստի հետ Աւե-
տանց երկիրը կը մտնենք: Կարծես թէ
Իսթի երկարատեւ աստիճանները,
դղնումն և արտասուք մեր սեպհակա-
նը կը լինին իսկ Յիսուսին համար քնն-
ականք այն մարդկային ազգի մեծ առաջ
նորդին և իշխանին համար, յորում

մարդկութիւնն փնդանալու և փա-
ռաւորեցաւ և որ ան միայն իսպառ-
ազդին և այլ բովանդակ մարդկութեան
նը քարոզեց փրկութիւն, ազատու-
թիւն, հաւատարմութիւն և մղղղա-
րութիւն:

Այս աւանդաւորն որդազան է ըս-
բուն մէջ կարծես թէ մանուկն փո-
պտոմութիւն կը կարգայ, իր անցեալ-
ըն և իր ապագայն: Իրա փառաբան-
ութիւնը կը գրառուի, սիրտը կը խան-
գաղատի և կը թափանչեմ երանգը կը
բորբոքի: Այս իր փոփոխ փոքրեցող
Աստուածաշնչն էր քանից իր մանկա-
կան յատակ աշխարհով կը տեսնէ նա-
րա մէջ, թէ քնն արարեց աւելի մարդն
ուր ընկերակցութիւնն: Բնչ վաւե-
րականութիւնն աւելի օրէնքները և
ազա հետ միասին կ'ուսանի բնական
նկարներ, առայդ պատմութիւններ և
որոշարժ անցքեր: Այնքան դարմա-
նային այդ է, որ Աստուածաշնչի լե-
զուն և իր պարզութեամբ և նախնա-
կան յատկութեամբ ասանք գրքերէ ա-
ռաւելի կը ձեւաւորէ և կը յոտակէ ման-
կան լեզուն: Աստուածաշնչի մէջ գիւ-
րին է գտնել մանկան համար պատմա-
թեան, նկարագրութեան և պերճա-
խառութեան նախնական գեղեցիկ օր-
նակներ, եթէ կամիր գրել և խօսիչ
ուսուցանել: Աստուածաշնչն էր
գեղեցիկաստութիւն սակեմարա ուսուցիչ
է ժողովրդական մարդա համար: Այ-
ստուածաշնչն աստուծոյ կարող է մար-
քել մանկան լեզուն և բարոյական ա-
մասուր կեանքը:

Այն երկիրներու մէջ, ուր որ կը
րոնական զգացմունքները վառուած
և բարեգրաւած են, հազարաւոր կեդ-
պերով յայտնի է թէ միայն ազգեցա-
թիւն ունի քրիստոնէութիւնը սրտի և
մարքի մշակութեան վրայ և Հիմնաւոր
քարոզը գեղեցիկ կը թափանչուի և թէ

մարի և թէ սրտի համար, և որչափ աւելիլ Վեեստարանի հոգիէն բխած է, այնքան եւս մերձ է Ճշմարիտ փիլիսոփայութեան, վասն զի այնպիսի պարզ ծանօթութիւններ կը հաղորդէ ունէրդին, որոց խորութեան և ճշգրութեան վրայ անհնարին է չը զարմանալ: Կրօնական օրինաւոր գրքերը միօք կը բարձրացնեն, առանց միգապատ սահմաններու մէջ մտորեցնելու:

Վացի ցայս վայր տասնները, Վրիտանիէութիւնն մի ամենամեծ օգուտ եւս ունի, որ բոլորովին անուշամտի է. քրիստոնէութիւնը ոչ միայն կ'աւսուցանէ և կը կրթէ, այլ և կըստիպէ ուսանիլ և կրթուիլ: Երբ խթանը հզօրագոյն է ամեն խթաններէ և պատուէրը ստիպողական ամեն պատուէրներէ: Վրդ՝ եթէ իմացականութիւնը զարգացնել և կարգաւ ու գրել ուսուցանել կարեւոր են որ և իյէ մանկան, խիստ կարեւոր են մանաւանդ քրիստոնէայ մանկան՝ իւր քրիստոնէութիւնը պահպանելու համար: Վյս կարեւորութիւնը այնչափ մեծ է և պարտաւորիչ, որչոփ եթէ Վստուած ինքը իր ձայնով հրամայած լինէր կարգաւ ուսանիլ Վրիտանիէի համար Վստուած գլուխութեան հեղինակ է: Երբ Վստուած գլուխութեան արուեստը սլուաւ մարդկանց, դրաւ նորա հետ միասին քրիստոնէական շինութեան անկիւնաքարը: Ինչեղանդով կը տարածէին հաւատացեալք այն գիտութիւնը, որմէ կախեալ է մարդկային փրկութիւնը: Ինչքան բնական էր անուշեւ, որ Վստուածաշնչի վրայ հիմնուած քրիստոնէութիւնը նեցուկ և միջնորդ է ժողովրդային կրթութեան: Ո՛վ չը գիտէ, որ քրիստոնէութեան հրգօր խթանէն աթափեցաւ նոյն իսկ մեր Հայաստանը և բազմակոտ դպրոցք և վարժարանք, որով և ծնաւ աղգային

մատենագրութիւնը: Ո՛վ չը գիտէ, որ այժմեան Վերապիւս քրիստոնէական առաջին դպրոցներուն պարտական է իր արդեան յառաջագիտութեան առաջին քայլափոխը: Ո՛ր չէ զարմանալ, որ շատ երկիրներու մէջ հագեւոր հովիւր ժողովրդային դպրոցի առաջին ուսուցիչն է: Վկեղեցին կ'ենթադրէ դպրոց, և քրիստոնէութեան ուսուցիչ և նպատակին նայելով Վկեղեցին չը պիտի լինի երբեք առանց դպրոցի: Ո՛ր որ քրիստոնէութիւնը ճշմարտապէս հաստատուած է, այն տեղ ծնած են և դպրոցներ: Վպրոցները քրիստոնէական մարդասիրութեան գլխաւոր գործքերէն և արգասիքներէն մէկն են: Կարող ենք ասել, որ եթէ քրիստոնէութիւնը լիովին ակրօպետէր ամեն սրտերու վրայ, ժողովրդային կրթութիւնը պիտի յառաջէր հսկայական քայլերով:

Վիատենք դարձեալ մի է խնդիր ևս: Ոմանք կ'ասեն թէ՛ ամեն մարդիկ հաւատարապէս յարմար չեն մանկավարժական (Pédagogique) քննադատման: Ի՞նչ կը հաւատանք այս բանին, բայց կը հաւատանք նմանապէս, որ սէրը և համբերութիւնը այս գեղեցիկ բնազդման գլխաւոր տարերքն են: Ո՛ր կարող ենք գտնել այս չքնաղ տարերքը: Վրդեօք այն դաստիարակի մէջ, որ կ'աշխատի աշխարհի համար, թէ այն դաստիարակի, որ կ'աշխատի Վստուծոյ համար: Վրդեօք նորմալ սրեր կրի համար աշակերտներ կը պատրաստեն, թէ նորա՝ որ երկնքի համար կը պատրաստեն: Թնկ ընթերցողաց խիղճը պատասխանէ այս հարցմանը:

(Շարունակել):

Սուրբ Եթովպոս միաբան Յակոբ որբազան արքեպիսկոպոսն, խնդրանօք Բաղիշոյ հովիւ Էրժ. Սամբրէ վարդապետի Սամիկոնեան, տուած է մաս նաւոր վարդապետութեան, սարկաւագութեան և դպրութեան աստիճաններ քանի մի եկեղեցական սպասաւորաց : Էրժ. Սամբրէ վարդապետի այս առթիւ գրած երկու խնդրագիրն առ Գեր. Յակոբ արքեպիսկոպոսն և գահունակութեան մի գրութիւնն առ Էմեն. Սրբազան Պատրիարքն Եթովպոս, արժան կը համարինք հրատարակել 'ի գիտութիւն ազգայնոց :

ԳԵՐԱՊԱՏԻՒ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ
ՅԱԿՈԲ ԱՐՔԵՊԵՍԿՈՊՈՍ

Յաշակերտաց մերոց Սարգիս գրպիր մահատի Եստուածատուրեան սիրավառ սիրտ ունենալով կուսակիցութեան գերաշխարհիկ սուրբ կենաց, աղերսելով աղերսէ զմեզ միջնորդ հանգիստնալ առաջի Եւաքերու գործ Սրբազնութեան ձերում, զի հաճեալիք ըստ Եւաքերական ձերում չը նորհի և իշխանութեան ձեռնադրել զինքն յատիճան Եւագ սարկաւագութեան :

Սչք նուաստքս ևս որ զՍարգիս գպրիս զվարուց և զբարուց համեստութիւն, զողւոյ հեզութիւն և ըզխոնարհութիւն, զսէր հմտանալոյ Եստուածային սուրբ գրոց, և զաշխարհուրաց ընթացան 'ի փորձոյ դիտեալ գիտեմք, 'ի թախանձանաց սորին ըստիպիմք վկայել արժանաւորութեան 'ի նոյն Եստիճան :

Սասնորց և խնդրեմք 'ի Սրբազնութենէ ձերմէ զի առ 'ի ընդ զպտորս եկեղեցւոյս՝ ըստ ցանկութեան և վկայութեան անձին իւրոց և մեր 'ի վաղիւ 'ի Տաճարի սուրբ Եմբարդւոյ վանիցս Բաղիշոյ յօժարեալիք կոչել ըզ

նա 'ի վեց Եստիճան դպրութեան՝ այն է յաւագ սարկաւագութիւն, որով պաշտօնիւ ուխտեալ է սպասաւորել սուրբ Եկեղեցւոյն Եստուծոյ ուր և մեք գտանիցիմք :

Եստու շնորհաբերութեամբ հայր սրբազան, ընդ և յաւելլուք զփառս սուրբ եկեղեցւոյս և զմեզ ընդ նմա շնորհապարտ կացուցանէք առաջի աւանդատուական սուրբ Եթովպոս Եւաքերական և ձերում հեզահոգի առաքելաշախիղ Սրբազնութեան, զոր մաղթեմք Տէր միշտ ոյլ և փառաւոր պահեսցէ 'ի հաստատութի և 'ի պարծանս Եւաքերական սուրբ եկեղեցւոյս Հայաստանեայց :

Կերապատիւ սրբազնութեան ձերում խոնարհ ծառայք :

Ն. Հռէն Բաղիշոյ Վանաթր խորհրդարէ վանից
Մանգէ Վ. Մանգիւն Ն. Եղիւէ Վ. Պառնի :
1868 Դեկտեմբեր 1 'ի վնս Ս. Ամբրոսոյ :

Առ Գերապատիւ Տ. Յակոբ Սրբազան Արք եպիսկոպոս Ս. Հայր :

Սրգիայեալն մեր և ձեռնաստու Եղիւն շնորհազեայ վարդապետ Պաշլունի և աշակերտեալն արքայութեան Երկնից, որ ձեռնադրութիւն վարդապետութեան շնորհի և աստիճանի յամին 1865 'ի Օգոստոս Եպիսկոպոսէ 'ի նախկին գիտէ Տարօնոյ սուրբ Կարապետի վանուց ընկալաւ 'ի սուրբ Յովհաննու վանն Սչոյ՝ որ 'ի Տորոս լեբին, ցարդ դեռ չունի զիշխանութիւն մասնաւոր վարդապետութեան 'ի քարոզել զգանն կենաց հօսին Եստուծոյ : Սրբազնութիւն ձեր որ առաքելաբար ընթանայ ընդ քաղաքս Հայաստանի և հեզահոգի ընթացիւք զսիրտս ամենեցունցս գրաւէ առ Եւաքերական սուրբ Եթովպոս Եւաքերական և յաւելլու զփառս Ս. Գահակալին և համայն

ուխտին որքոց Յակոբեանց, համար-
ձակեցուցանէ զնուաստութիւն մեր
խնդրելի ՚ի շնորհաբաշխ սրբաշնութե-
նէ ձերմէ զՆիղէն վարդապետ կոչել
՚ի պատիւ և յիշխանութիւն չորս առ-
քիճանի և դաւաղանի մանաւոր վոր
գտապետութեան եւս, առ ՚ի գործա-
կից և վաստակակից լինիլ ընդ մեզ
վարդապետութեան բանին կենաց, մը
խիթարել զժողովուրդս չորեքին եկե-
ղեցեաց քաղաքիս :

Նիղէն վարդապետ ոչ սակաւ հը-
մուտ է վարդապետութեան սուրբ
գրոց, և Գոժար յուսուցանել և խը-
քատել զժողովուրդ Տեառն, վասն
որոյ և արժանի է հանդիպիլ շնորհաց
ձեռնադրութեան ձերում :

Այսու շնորհաբերութեամբ ձե-
րով գիտաթիբ զի առաւել շնորհա-
պարտ կացուցանէք զմեզ առաջի սուրբ
Ախտիգ առաքելական և ձերում ա-
ռաքինակենցաղ սրբազնութեան զոր
մաղթեմք Տէր ընդ երկայն աւուրս
պահեցէ ՚ի պարծանս Առաքելական
սուրբ Աթոռոյն Հայոց և համօրէն
Եպիս :

Կերպարտիւ Սրբազնութեան ձե-
րում խոնարհ ծառայ :

Ի 1868. դէկտ. 6. Հովն. Սարգիսյան Սարգիս
Ի խաղաղութեան Հայոց Վ. Սարգիսյան :
Բաշէլ տառի :

ԱՌԱՔԵԼԱԳԱՏԻՒ Ս. ՀԱՅՐ

Գահակալ Պատրիարք Ս. Յակոբեանց
Ռաքելական Աթոռոյն Երուսաղէմի :

Ի տնօրէնութենէ Առաքելական
սուրբ ուխտիգ Տիգրանակերտցի Գեր-
Յակոբ Ս. Ըրբ Եպիսկոպոս այցելա-
բար շնչեալ ՚ի գաւառս Հայաստան
եայց և հասեալ առ մեզ ՚ի վիճակս
Սալնոճարոյ, առաքելական ձրի շնորհոց
Սուրբ Հոգւոյն զուարճացոյց զտուն

եկեղեցւոյն Ատուծոյ, վասն ոյր փու-
թամբ զշնորհակախ մեր և Առաքողի
Այցելուիդ մատուցանել :

Շնորհակալ եմք, զի ՚ի ձեռնասուն
Աշտկերտաց մերոց զՆիղէն աբեղայ
Պարունի կոչեաց ՚ի չորս աստիճան
մասնաւոր վարդապետութեան, զԱր-
գիս դպիր Ս. Ատուածատուրեան ՚ի
վեց աստիճան Առաք. սարկաւագու-
թեան, փոխելով զանունն ՚ի Կորիւն
սարկաւագ, զվաթառն մանկտի ՚ի չորս
աստիճան դպրութեան, և զհարկւր
հատոր եւս գրեան և տեարս շնոր-
հեաց դպրոցաց և ընթերցարանաց քա-
ղաքիս և գիւղերէից վիճակիս, և ա-
ռանձին առանձին այցելութեամբ զա-
մենեակն ցոսա քաղաքերեաց ՚ի յառա-
ջագիմութիւն ասպարիկի ուսման, և
ընկալալ ՚ի վերջոյ ՚ի ձեռն մեր նուառ
տութեան զշնորհս քաղաքացւոցս և
գիւղացւոցս ՚ի նպաստ պայծառու-
թեան առաքելական Սուրբ Աթոռոյդ
որ փոքր ինչ է, արձանագրեալ ՚ի տու-
մարի Աթոռոյդ և վաւերացեալ ՚ի մէնջ
տակայն աղաչեմք զփոքր շնորհն վիճակիս
՚ի բաւականն համարիլ, Հայր Սուրբ .
քանզի աւուրք ներութեան էին ժո-
ղովրդոցս, և մեծութիւն շնորհակա-
լութեան մերոյ՝ որ վասն հոգեւոր
պարգեւաց առաքելաշնորհ Այցելունի,
լլուցն զնուազութիւն շնորհաց առա-
քելոցս ՚ի գանձանակդ Առաքելարի :

Շնորհեալ ժողովրդեանս զօրհնու-
թիւն Ատուածակախ Սուրբ վարացոյ,
որում մնայ անձկանօք և խոնարհ Հո-
վն Սալնոցորոյ :

Յաթ 1868 դէկտ. 23 Սարգիս Վ. Սարգիսյան
Ի իմս Ս. Արղիսոյ ՚ի Բաշէլ

ԳՊՐԶ ԼԷՖԻՕՇԱՏԷ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

ՊԻՐ ՄԷՆԴԼԻՔ ԽԱՏ ՎԷ ՍԵՍԵՐԵՅԻՆԻՆ

1868	Վ Ա Ր Ի Տ Ա Տ	ԴՆՈՒՄ	ՓԵ	ԴՆՈՒՄ	ՓԵ
Յուլի 1	Սկզբիկո Սերամիայ վէ եօլ վէ Վալիճի տէյիլը մէնլէրինտէն ալընան	35500			
"	Վալիճի սուրբնտան ալընան իրատ	700			
"	Իշէրքի պահճա իճարընտան	325			
"	Պիր պապ վաքըֆ հանէ սաթըլը Սարիամ Ստէ փանեանա	30000			
"	Թփաթիւն վէ վաքըֆ հանէ քիրարընտան	220			
			39745		
"	Պաշ բուհար պահճաւընըն բանպը սաթըլընտան	360			
"	Լալի զիմէ մաթլէրտէն թահսիլ օլան ագճէ	9336			
"	Սէնէյի սապըք հիսապլէրինտէն գալան պապայէն Նին թահսիլնտէն	7202	1/2		
	Սաթըլ Սաթըլ վաքընտան ալընան իրատ		16898	1/2	
"	Թեքէ վէ իրօնէյ սաթըլընտան	2965			
"	Սիւտ իճարընտան	1500			
"	Լալէն օլան փարիտթ	570			
"	Պաշ բուհար Լալիայ վէ այ Լօրկի պահճաւըլըն իճարը	1200			
			6235		
"	1866 Սէնէսինտէ Լիփանտպատիւ Վուկաս Զայր		62878	1/2	
"	սուրբուհ սապըք միւթէլլիտէն թահսիլ իտ տիլիճագճէ սէնէյի սապըք իճմալինտէն պէյան	14810			
"	Սէնէյի սապըքտա սանտըքտայ գալան ֆազլայ ագճէ	6182			
	Լալընըլ սէքսէն իւլ պին սէքիլ եիւլ եթմիշ զուրուշ իկիրմի փարայ տըր		20992		
	Սէնէյի գորտան մահաւալի		83870	1/2	
	Սուրբ Սահար վաքընտան հասըլ օլան				
	զէյտ բուղանի քըյէ	901			
	Պաշ բուհար զէյթինլէրինտէն	101			
	Սէրհուլ Լիթմեան Զարութիւն աղա				
	Ջիշատակը զէյթինլէրտէն	87	1/2		
	66 Վիլէ սուանպօլ ինթայ				
	43 1/2 " " շայր		1089	1/2	

վանուց միամեայ արդեանց և ծախուց ցուցակն է, 1868 ամին:

ԵԿԵՂԵՑԻ ԻԼԷ Ս. ՄԱԿԱՐ ՎԱՆՔԸՆ

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏԻՐ 1868 ՍԷՆՏԵՄԲԵՐ

1868	Մ Ե Մ Ա Ր Ի Փ Ա Թ	Ղ - .	Փր	Ղ - .	Փր
Յոս. 1	Բերեքէնթէ մէսարիֆ պա միւֆրէտաթ	4894	1/2		
"	Տէյրմէնթին քօնթրաթօլարնայ իճարլէրի իշիւն	927	1/2		
"	Շէհէր էպիլէնթինն օլան մէսարիֆ պա միւֆրէտաթ	1861			
"	Տէյրմէն թափրէրինն վէ պաթալլէրինն պա միւֆրէտաթ	4361	1/2		
"	Օլմէմաթտա գալան փարայ պա միւֆրէտաթ	13685			
"	(Ն) իբի այլք մահիլէ վարդապետէրէ ֆուքալալէրէ վէ վարժապետէ	15725		25729	1/2
"	Սուրբ եկեղեցինն գարջընտայ օլան վազըֆ խանէինն թամիրինն Ս. Հանօղիւն	493			
"	Էկեղեցական սանտրղոնայ քօնուլան	100			
"	Սապրէ տէյրմէնձի էլլլէ Սիկամեայ տէյրմէնի նէ մասրուֆ	955	1/2		
"	Սերգուս տէյրմէնձիէ պախշ օլունան	266	1/2		
"	Քալիձի տէյրմէնինան պիր այլք քէսիլէն	150		17690	
"	Էօլ տէյրմէնձիսի էլլլէ մէգբիւր տէյրմէնէ մասրուֆ	780			
"	Վանքը Ս. Կարապետէ վանք մեսարիֆի իշիւն վէրիլէն	500			
"	Վանք էպիլէնթինն վէ թարլա աշմասընայ օլան մէսարիֆ պա միւֆրէտաթ	6125			
"	Մէնէյի սապրէ հիսապլէրինտէ պու սէնէինն վարի տաթընտան հձի Կօստանդինօտան ալընան աքձէ	1000		8405	
				51824	1/2
	Սէպիւր սէնէտէ ֆալլայ գալան աքձէ իլէ Քըսթընթ գարիլէսինտէ ալընան 24 սահաթ սու սուրբ Էկեղեցիէ իրաւո կէթիրմէք իշիւն			12000	
	Սանտրղոնայ մէվճուտ տուրան աքձէ			20046	
	Էալընըզ սէքսէն իւշ պին սէքիզ եիւշ եթմիշ զուրուշ իկիրմի փարայ արք			83870	1/2

Աւարայրի ամպերը.

Յողեցէք, ամպեր, սուրբ ցոլ կենդանի,
Ոսկերայ վերայ՝ վեհ Աւարայրի^(*).

Յողեցէք, ծին, ճաղկին, գալարին,
Սանրամաղ փոշիք անմահ քաջերին :

Ով գութ մեղք ամպեր, քաջաց արիւնից
Գոլորշիացած Աւարայր դաշտից :

Յողեցէք վերէն սուրբ ցոլ շահեկան,
Քաջ երակներով խաղայ ցոլ արեան :

Ով ամպեր, ամպեր, կաթիլք արտասուաց,
Ըրեան հետ զանգուած՝ ծիածան դարձած :
Յողեցէք անձրեւ, շնչի շունչ գարնան,
Խլրտին շարժին՝ զոհեր հաշտութեան :

Այս ամպեր, ամպեր, արեան կաթիլներ:
Քամին տանում է՝ քաջաց փոշիներ :

Յողեցէք, զանգուին, իրար միանան,
Օգորանան կանգնին՝ քամուն դէմ կենան :

Յողեցէք ամպեր, գարնան գուշակներ,
Նոր գարուն տեսնեն չայսց սերունդներ :
Շին հոգի նոր կեանք իրար միանան,
Շին հարք նոր սերունդք՝ իրար բարեւ տան :

Եւ ես այն գարնան գուշակ ծիծեռնակ,
Օտվ ցամաք անցնիմ, աշխարհ բովանդակ :
Օրլսլըլամ կանչեմ չայերին գոնեմ,
Օ՛իլ ծիլ վարդերու գարուն աւետեմ :

Անեմ յանկարծուստ քամի վեր կայաւ,
Քաջաց փոշիներն ցրուել անխնամ :
Բայց սաստիկ քամուց ամպըն մղեցաւ :
Կայծակ որոտաց՝ արիւն ցողեցաւ :

Յողեցաւ արիւն, իջաւ նոր հոգի,
Յրուած փոշիներն եղեն կենդանի :
Տօն կենդանութեան ածնեց չայաստան,
Կենդան եմ, ասաց, այժմ եւ յաւիտեան :

* * *

(*) Աւարայրը այն գաշան է, ուր նուհատակեցան Ս. Վար. Գաննաք:

La nation arménienne est l'une des plus anciennes du monde: sa langue offre dans sa syntaxe plus de rapports avec les langues européennes qu'avec celles de l'orient. Elle a formé pendant deux mille ans, et jusqu'au 14 ième siècle un état indépendant.

Une taille élégante, et une physionomie spirituelle, distinguent cette nation, qui, toujours victime des guerres, dans lesquelles les grandes puissances se disputaient l'Arménie, a été obligée de quitter en partie le sol de ses encêtres! Livrés au commerce, et aux fabriques, les Arméniens sont repandus et ont prospéré partout, depuis la Hongrie jusqu'en Chine; ils pénètrent dans des régions inaccessibles aux Européens; ils traversent les déserts de la Tatarie, et le plateau qu'arrose le Niger. Dans leur pays, comme dans l'étranger ils vivent ordinairement en grandes familles, sous le gouvernement patriarcal du membre le plus âgé, et dans une concorde rare. La religion des Arméniens est celle de l'ancienne Eglise orientale. Leur jeûnes, et leur abstinences surpassent en rigueur et en fréquences tout, ce qu'on voit, chez les autres sectes chrétiennes. On peut estimer le total de la nation arménienne à 5,000,000 d'individus.

MALTE—BRUN

GÉOGRAPHIE UNIVERSELLE

Հայոց ազգը աշխարհիս հին ազգերէն մէկն է. Հայոց լեզուն համաշխուրթեան կողմէն աւելի Նը. մանուկէն ունի Եւրոպական՝ քան թէ արեւելեան լեզուաց հետ: Հայոց ազգութիւնը հազար տարիի չափ, մինչև ժ. Գ. դարը, անխափ կառավարութիւն ունեցաւ:

Աշխիւ հասակ մը և համաճարկ կերպարանք մը, այս ազգի յատկութիւններն են: Այս ազգը պիտի ընդհատ պատերազմներու մէջ գտնուած է, որով մեծամեծ անբութիւններ կ'աշխատէին իրարու ձեռքէ յափշտակել Հայաստանը, և միշտ ստիպուած թիւեր իւր նախնեաց երկիրը մասամբ իւր թաղու: Վաճառակամութեան և արուեստագործութեան անմեղատու բլրով՝ Հայերը տարածուած են և յայտնիութիւն գտած ամեն տեղ, Հռոմէոսիայէն մինչև Չինաստան: Հայք կը մշակին այգիսի տնկեր, որոնք սննդաւոյց են Եւրոպացւոց: Դարձաւ կ'երթնեն, կեն թաթարոսանի անապատները և մինչև Նիկիոյ ոռոգած լեռնագաւջը: Հայք ինչպէս իրենց երկիրն՝ նշնպէս օտարութեան մէջ միշտ մեծ ընտանիքներ կը կազմեն, հաստակելով Գարգաստանի ամեն նէն հասակաւոր անդամը՝ նահապետական կառավարութեանը՝ և ժխարանական շնախարհիկ կեանք մարելով: Հայոց կրօնը արեւելեան նախկին Եկեղեցւոյ կոմքն է, Հայք ծովապահութեան և ծովապահութեան կողմէն կողմէն կը գերազանցեն ամեն քրիստոնէականրէն: Հայոց ազգը կարելիք անհատները ընդամենն կը հաշուին մօտ 5-000-000 (*):

ՄԱՆԱԳԻՐԻՆ

ԸՆԴԱՆՈՒ ԵՎ ԵՎԵՐԵՐԻՆ

ԲԵՐՈՅԵԼՆ

ԱՌԱՔԵՒՈՒ ՈՒ ԲԱՆԱԲԱՅԿԻՐԹ ՊԵՏԱՆԻ

(Հարուսակութիւն, տես թիւ 3):

Ի.:

ՉԱՐԱՍԻՐՏԲ

Այս անձը ինծի չարիք ընել ու փնասել կը ջանայ, բայց ես արդեօք պատճառ տուեր եմ իրեն՝ թէ չէ. ե. թէ տուեր եմ, պէտք չէ ամրջնամ խոնարհելու ու իրով թողութիւն իրեն դրելու. և այսպէս բարեկամ մըն ալ կը ստանամ և թշնամի մը կ'աղատիմ:

Մէկ խնամի մը միայն ունենալը շատ է. իսկ բարեկամ՝ հարկւր ալ ունենաւ դեռ չիլէ:

Թէ որ նախատինքը բրած ըլլայ ինչի, պէտք է միտքս բերեմ որ ինքն ալ ինծի պէս մարդ է, ու ամենքիս ալ ենթակայ ենք սխալելու. դարձեալ պէտք է մտածեմ որ պակասութեանը հետ ունի խել մ'ալ կատարելու: Թիւններ, իսկ ազատութեամբ պէտք է զինքը դատիմ, եղած նախատինքը ա.

(*) Յիշեալ աշխարհագիրը պակաս դրած էր մեր Ազգի թիւը. իսկ մերը ընդ համարեն ընդունած կարծիքը նախապատու համարեցինք: Ինչ ցաւիք որ մինչեւ ցարդ ապագային ստացք վիճակագրութիւն չունենք:

ւելի մեծ չը բռնելով, և միտքս պէտք է դրնեմ, որ կամ տգիտութեամբ, և կամ սխալմամբ էր ըրածը . գթութիւն պէտք է սանձեմ իմ բարկութիւնս որ իրեն դէմ կը զգամ. բարեպաշտութեամբ պէտք է զինքը փոխադարձ նախատեսէն զգուշանամ, և վեհանձնութեամբ, որչափ կարելի է շուտով հետն հաշտուիլ ծանամ:

Դե, չեմ ուզեր սրտիս մէջ ուրիշի գէմ աստեղութիւն ունենալով քուն ըլլալ։ Ուրիշի հետ թշնամութիւն ունենալով ինչպէս կրնամ ազաչել զ'յս տուած ու ըսել՝ որ ինչպէս էս իմ պարագայաններուս ինչ խղով՝ նոյնպէս Գոռ ալ ինչի խղովիւն պար։ Պէտք է որ հետը խաղաղութիւն ընեմ՝ առանց որոյ երջանկութիւն չըկայ։ Իսկ հաշտուելէն վերջը՝ պէտք է ամեն բան մոռնամ։

Չարերէն պէտք է հեռու կենամ.
վասն զի բորսոս ոչխար մը կրնայ բռ-
լոր հօտն սպականել . պէտք է գգու-
շանամ նաեւ այն ամեն բանէ որ կեր-
պով մը իրենց չարութեանը պատճառ
կրնայ ըլլալ : Իսոյց ինչ որ ալ ըլլան , ա-
նոնք ալ մարդիկ են , իմ եղբայրներս
են . Ըտուած արեւը նաեւ անոնց
համար ալ կը ծագէ . ուստի պէտք է
զգուշանամ որ իմ բռնած խիստ կեր-
պովս աւելի չգրգռեմ ու չչայրացունեմ
կրքերնին :

10 f.

ՀԱՐՈՒՍՏՆ՝ ՈՒ ԱՂՔԱՏ, ԻՇԽԱ
ՆԱԽՈՐԲ ԵՒ ՀԳԱՏԱԿԲ

Դու հարուստ ես . շնորհակալ ե-
ղի՛ր Աստուծոյ , բայց Ա . յիշէ որ հա-
ջրասուծի՛ տուողն Աստուած է . Բ .
որ 'ի բարին գործածելու համար տու-
ւեր է քեզի . և Գ . որ մէկ օրուան մէջ
կրնաս ամէն ունեցածդ կորսնցնել ,
նայէ ուրեմն որ չափաւոր ըլլաս , քաղ

ցըր ու մարդասէր, դատարկակեցու
թեամբ ու շաշլութեամբ ուրիշնե-
րէն վեր ըլլալու փոյթ մի ունենա-
յալ նայէ որ առարկինութեամբ ու գը-
թութեամբ ցուցնես քու անձիդ վը-
րայ որ նախախնամութէ գործիք մըն
ես իր շնորհքները բաշխելու, աղքա-
տաց օգնելու, սրամիտ անձանց վրայ
ձեռք դնելու, որպէս վի ուրիշներուն
բարերարութիւն ընելով զքեզ կատա-
րելագործես :

Իսկ դու որ բարձր աստիճանի մէջ ես, կը յարգեմ զքեզ՝ վասն զի ամեն իշխանութիւն Նստուծմէ է, բայց գիտեմ նաեւ որ այն աստիճանը ուրիշ ներուէն բարեացը համար տրուած է քեզի. որպէս զե քեզմով միշտ արդարութիւնն յաղթող ըլլայ : Կարճեալ գիտեմ որ դու ալ մարդ ես, գիտեմ որ աստիճան ու պատուանունն ըսածդ ուրիշ բանի չմտնիր՝ եթէ ոչ գրքի մը հարուստ կազմին որ գրքին ամենեկին յարգը չաւելցնէր . բայց թէ որ ձեռք տաս ստորնագունից, թէ որ անոնց գանգասները ու տրտունջը արդարութեւն գտես, թէ որ սուտ խոստմունքներով չես խաբեր ու խաղցներ զիրենք, թէ որ նախ դու իրենց բարի օրինակ կ'ըլլաս, ան ատենը կը սիրեմ ես զքես, կը յարգեմ ու կ'աղօթեմ Նստուծոյ որ կեանքդ երկնցյնէ :

Ինչհանրապես ես աղքատ եմ, պզտի տնակի մը մէջ ծնած եմ, հաբուստ ուղղականներ չունիմ, բարեկամներս ալ աննշան մարդիկ են. բայց ինչ կ'ըլլայ եղբեր, Յիսուս ալ աղքատ էր. աղքատ էին առաքեալներն ալ և գրուած է Թէ. աղքատաց է խրատու թիւնը, Ո՛հ, հարստու թիւն չունենալս զիս շնուաստացուններ, կրնամ ալ մենէն հաբուստ մարդուն հետ հաբուստ ըլլալ. Մատուծոյ կամբը կը կատարիմ, վասն զի իմ Ճ ակտի քրտինքովս

կ'ապրիմ. և թէ որ իմ պարտքերս կ'ընեմ, թէ որ առաքինի ու քաղաքակիրթ եմ, շատ աւելի յարգ ունիմ քան ըզնենգաւոր հարուստ մը և քան զհարստի տղան իշխան մը ։ Ի՞նչ մեծ ու ընդարձակ գետ մըն է ու վտանգաւոր . օրով ամէնքը անուշը գիտեն և թագաւոր կը կոչեն զինքը . բայց այգեգործը աւտոր աւերմունքներէն կը վախէ ու նաւաւորը ալեկոծութենէն կը սարսափի, և իրեն եզերքներսւն մօտ բնակողները ողորմունքէն կը դողան . իսկ այն առաւելը որ իմ գաշտս կ'ոռոգէ, իրաւ պզտիկ է ու անծանօթ անասն որ և ոչ անուն մը չունի, բայց երկիրները կը բեղմնաւորէ և հողը կը կենդանացնէ չորութեան ժամանակ ։ Ինչո՞ւ և իմ առուակիս ջուրը երկուքն ալ հաւառարապէս երկիրքէն կու գան և երկուքն ալ կ'երթան նոյնպէս ծովուն մէջ կը կորսուին ։

Կան ոմանք որ զմարդ իր զգեստէն կը չափեն ու կը դատեն, բայց այսպիսիները չեն դիտիր թէ Զֆուր Էֆուր քծնաւոր լընէր, և թէ երբեքն կուտած պատենի մէջ ալ ընտիր պողպատէ գանակ մը կը դրուի, և թէ ընդհակառակէն կապիկը թէպէտ մետաքսէ ըզգեստներ ալ հագաւի՝ նորէն միշտ կապիկ է ։ Ուրիշի՞նք չափ ստակի հարուստութիւն ունենալը մի հարցնէր, հապա թէ ինչ մարդ է ։

Ի՞նչ տես, առ աղքատը կ'ուռի ու կը սոքանայ, վասն զի հարուստներու հետ սկսեր է վերաբերութիւն ունենալ, ուրիշ մ'ալ հարուստը կ'առնէ ու անկէ կը փախի, և կը կարծէ որ անիկայ առաքինական զգացմունք չկրնար ունենալ ։ Ո՛հ, չէ, եղբարք, լաւ հարուստներ ալ շատ կան, ինչպէս որ գէշ աղքատներ ալ չեն պակսիր, բայց աւելի լաւ է հարուստներու խիստ շատ չմտնեալ, վասն զի

կրնանք նսեպ մահացուցման առիթներ ունենալ, հաւասար ընկերութե մէջ աւելի դիւրաւ ու հանգստեամբ կրնանք ապրիլ ։ Ս'եր գլխաւորները անհանգիստ չընենք անդադար բանի մը ետեւէ ըլլալով ու թախամնէլով, և ամեն յայտերնիս իրենց խոստմանքը կամ օգնութեանը վրայ չդնենք ։ Ինչո՞ւ արուեստաւորներ, ինչո՞ւ գեղացիներ, ինչո՞ւ բոլոր իմ եղբայրներս, նորէն կ'ըսեմ, զմեզ ամենէն աւելի լաւ պաշտպանողները մեր թեւերն ու մեր գլուխն է ։

Դաքինի ու քաղաքակիրթ աղքատը հարուստներն ու վերնագոյնները կը սիրէ՝ բայց անոնց աչքը մտնելու համար զինքը շուռստացներ, իրենց ակտերը չքաղաքացիներ շողովելով, և թէ պէտ փայփայէ ալ՝ բայց միշտ չճարիւտը կը խօսի, միտքը գնելով որ իր ազատ և իրաւացի վարմունքով նուաւ տանայու տեղ՝ աւելի սիրելի և մեծարոյ կ'ըլլայ ։ Կը յանձնեմ ուրեքն իբրեւ յիշելիք մը որ միշտ պիտաւթիս կ'ապալիս ու մեհակնաթիս կ'առնիս ։

Իսթի .

ՏԵՐ ԵՒ ԾԱՌԱՅ

Դ՛ուսան ինչո՞ւ վիճակի տէր մարդ մըն է, որ ուրիշ լաւագոյն արուեստ մը չունենալով՝ ձեռքը ինչ որ հարուստը չուզէր ընել, ինքը յանձն կ'առնու իրեն տեղ ընելու ։ Դաշնագրութիւն մըն է՝ որով երկուստեք պայմաններ կը դրուին, (յօդ. 39) ու միշտ լռելիայն աս պայման ալ կ'իմացուի որ ծառան ձեռքէն եկածին չափ առաքինի ու քաղաքակիրթ մարդու մը պարտուց համեմատ պիտի ծառայէ իր տիրոջը՝ և թէ տէրն ալ զինքը պիտի պահպանէ և իրեն վիճակը պիտի լաւցընէ ։

Ի՛նչ տէր մը գիտէ որ ծառան

բնութեամբ իրեն հաւատարէ, (յօդ. 16.) ուստի հետը մարդասիրութեամբ կը վարուի, իբրեւ ընտանեաց մէջէն մէկը այնպէս վրան կընայի. «տէպ լու տէպ չփոխեր» միայն պարկեշտ ու տրգար բաներ իրեն կը հրամայէ, չգիտցածը կը սովեցընէ և բնաւ իրեն հարկաւոր եղածէն բան մը պակաս չընէր և աշխատութեանցը մէջ բաւական ժամանակ հանգիստ կը թողուր և Չափազանց ընտանութիւն չբանեցընէր՝ որպէս զի իրեն պատիւը չկորսընցընէ. վրան կը փոռահի՝ բայց իր ընթացքը կը դիտէ. չար օրինակ ամենեւին չտար, և թէ որ հիւանդանայ ու ծերանայ՝ երեսէ չթողուր, և խիտ լաւ գիտէ որ ծառան իր տուած կրթութեան համեմատ բարի կամ չար կ'ըլլայ ։

Առաքինի ու քաղաքակիրթ ծառան գիտէ որ պէտք չէ հետզանդի տիրոջը երբ բարոյականի դէմ և կամ իր կենացը գէմ մնաւ բերող բաներ կը հրամայէ, ասկէ դուրս յամենայնի հլու ակնածող և ամենէն ոչինչ բաներու մէջ ալ հաւատարիմ է. լեզուն կը զըստէ, և միանգամայն իր տիրոջ կենացը ունեցածը ու պատիւը կը պաշտպանէ. իշխան են շատ ծառաներ որ իրենց տիրոջը աղքատնալէն ետեւ ոչ միայն չեն ուզած զիրենք թողուլ հեռանալ, այլ իրենց աշխատութեամբ զիրենք դուրմաներ են հաւատարմութեամբ ։

Այս լատեներս նաեւ անոնց ալ կը վերաբերին՝ որ խանութ մը մտած են կամ ուրիշի դաշտերը կը մշակեն. իւրի ծերուկի մը հետ ճանաչուորեցայ որ կ'ըսէր. «Գեաք լէ Բանի գործի վրայ բնէլ զակիլայ որուն վրայ մարդ ինչ խալածի. և ոչ ալ պէտք է խալածիլ անոր վրայ որ ծառայութեան մը քրիւր ես» իսկ ծառայից ալ ասանկ կ'ըսէր ։

Կամ մարդու պէս ծառայ, կամ չէ նէ փախիր՝ գնայ ։

(Ե)

ԲԱՐԵՐԱՐՈՂԻ ԵՒ ԲԱՐԵՐԱՐԵԱՆԻ

Հարստութեան, վիճակի և կարողութեան առ տարբերութիւնները մարդկան մէջ կայ մը կը ձեւաւորեն մէկմէկու բարին ու զեւր և մէկմէկու բարիք ընելու ։

Հարուստը առատաձեռնելու կարողութիւն ունենալով՝ չունեցողին կ'օգնէ ։ Իսկ առատաձեռնութիւնն ալ պէտք է որ չափով ու խոհեմութեամբ ըլլայ. նախ քան ունեցածդ մտածէ, վերջը անոր արդիւնքը որուն որ կ'ուզես բարերարութիւն մը ընել. ուստի աւելի ողորդականներու դպար գեւէ քան թէ անձանց մարդկանց արդիւնք ունեցողներու, խոհեմներու որ քեզի շատ անգամ ծառայութիւններ ըրած ըլլան, կամ այնպիսւց մը որ գէշի չգործածեր ։ Երբոր կ'ուզես տալ, նայէ մէկէն տաս, ու բախտութեամբ, առանց դիմացինի մահացընելու, առանց երբոր վարներու, առանց փոխադարձ յաւայ, և ոչ իսկ երբոր ստագէտ ըլլալուն սպասելով ։ Երբոր բակցա փոխարէնը կ'առնես անկէ որ իրեն օխոյն համար որուած ինչուան կաթիլ մը ջրոյն հոշիւր կը բռնէ ։

Բարերարեալը գտնարտով և ուսարիտութեամբ պէտք է ընդունի՝ առանց դժգոհալու, առանց իմաստաւ կաթեան ։ Տեսեր եմ զմտնա որ բարերարութիւն մը ընդունենէն ետեւ կ'ըսէին՝ Հէ՛մ, ի՛նչ մեծ Բան է. ի՛նչ համար Բան մը ընել լէ. արդէն պարտական էր ։ Բարերարներ, թող անանկ ըլլայ. բայց մտածեցէք մէյմը ձեզի եղած օգուտը, ուրեմն պարտական էք ոչ միայն բերնով շնորհակալ ըլլալու, հապա նաեւ նոյնը՝ մտքերնիդ միշտ պահելու էք ։ որպէս զի երբ առիթը գայ՝ փոխարէնը հատուցանէք ։ Բարերարը թէ անձին

և թէ ուրիշներու և կը մտածէ, փասն զի ասկերախտութեամբ տհաճեցնեն լով բարեսէր անձինքը՝ բարերարութենէ ետ կը կեցնեն:

Իսոյց բարերարութիւնը միայն տա լով չլըլար: Ի՞նչ բարերարութիւն չեն ընենք բեզի վարժագետներդ զա տե, քերդ որոնք գիտութիւն կամ արուեստ մը բեզի կը տվընցնեն Խուսափ պէտք է երախտագէտ ըլլաւ իրենց Ե՛ւսեւ, հիմա տապգտի հասակիդ մէջ ալ կըսէ Զատ բարերարութիւն ընել քու չորս կողմէ եղողներուն, զոր օրինակ իրենց տհաճութեան, ձանձրութեան և աշխատութեանց պատճառ չլըլարով ընդհակառակն ջանալով միտթարել զուրիշները, խաղաղցնել, բարի բաներ խօսելով ու քաջալերելով: Ա՛նձնալէզ վերջը թէ որ լաւ մշակեա քու երկիրներդ, թէ որ քու քաղքիդ մէջ արուեստ մը մտցնեն կամ կատարելապարճես, թէ որ աղքատ ժողովուրդըն աշխատացնես ու անոնց ապրուստը Զարեա Ե բարերարութիւն ըրած կ'ըլլաւ Ե թէ որ ուսման ետեւէ ըլլալով ճշմարտութիւն մը գուրս հանես՝ որ ամենուրեք տգիտակար ըլլայ, թէ որ չառ խորհուրդ մը տառ, թէ որ մէկտե մը արգարութեամբ տոսկ փառ տրիելու Զանբայ, բանաս: Թէ որ ուրիշներուն պատիւը պաշտպանես, թէ որ տղայ մը կամ աղջիկ մը աղաթսն անարութեան ճանքէն, բարերարութիւն ըրած կ'ըլլաւ:

Այլ պատանեակք, տեղեկացէք թէ ձեք քողքին մէջ եղած անկեղծոցը ան հաստատեց Ե ո՞վ տուաւ ան ողորմութիւնը, ո՞վ ան օգիտները օգնութիւնները, վարժապետներն ու պատանաւորները չինել տուաւ, բոլորն ալ բարերարք, և գուք պէտք է որ անոնց երախտագէտ ըլլաք:

Ս. Լ.

Ծ. Ե. Բ.

Թէ որ ես ուզենամ Զամբորդութիւն մը ընել, անոնց խորհուրդ կը հարցնեն՝ որոնք որ մէյմը նոյն Զամբան ըրեր են, տոսկ չէ՞: Օ՛րերն ան մարդկանց մէջ ան ուղեւորներն են՝ որ մեր Զոր սկսելու Զամբան արդէն իրենք ըրած են, չարս ու բարին տեսած, վտանգները, գժուարութեանց անցքերը և հանգչելու յարմար տեղուանքը օտլրած են: Ի՛րենմն իրենց խորհուրդ հարցնենք որ իրենց փորձով մեզի առաջնորդեն Ե վասն զի ո՞վ որ կ'ուզէ իր անձին տուժիլք փորձառու ըլլալ, կը տեսնայ թէ որչափ սուղի կը նստի: Օ՛րերն արդէն խել մը զուարճու, թիւններէ զուրկ են. գոնէ երիտաւարդաց իրենց վրայ ունեցած սէրն ու յարգութիւնը տեսնելով միտթարութիւն: Այնքինքնագործին մը աստիճաններուն վրայ նստած էին հին Յունաստանի այլ և այլ ժողովուրդները ու եղած խաղաղութիւնները կը գիտէին. հոն ծեր մը եկաւ, և սկստաւ այլ և այլ ազգաց առջեւէն անցնիլ, բոյց չեղած ժողովուրդ մը որ իրեն նստելու տեղ տայ, երբսր Ապարտացւոց արջէն ը հաւառ, բոլոր երիտասարդները ամէնքը մէկէն ոտքի ելան, օրպէս զի ցինքը նստեցնեն. ան ադեն ամբողջ հանդիսարանը սկսաւ ծափահարութիւն ընել, և ծերն ալ գոչեց: Ի՛նչը Յոյն տաքիտ-Ինչը ինչ Զաննան: Բայց միայն Ապարտացի ինչ Գործարքէն: Ա՛նք ալ գոհ չլուր միայն ծափ զարնելով գոլել բարիք ընողը, այլ նաեւ հետեւող ըլլանք: Օ՛րերը ուրիշ այնչափ ներուսթիւններ կը քաշեն, թող միտթարութիւն մ' ալ ունենան՝ տեսնալով երիտասարդաց իրենց վրայ ունեցած խնամքը, Նայե՛ Վրիգորիկը քիչ ագնի:

ողայ է , ստէպ ստէպ Սինաս ծերու-
կին այցելութեան կ'երթայ , որ խեղճը
որդիքը կորսնցունելով չոր գլուխ մու-
ցած է , իրեն անցած գացած պատ-
մութիւններ պատմել կուտայ , խոր-
հուրդ կը հարցնէ , քաղելու որ ելլայ
իրեն ընկերութիւն կ'ընէ , թեթեւ
ծառայութիւններ կ'ընէ , կը ջանայ որ
ամենեւին նեղութիւն չը տայ եւ իրեն
ձանձրանալի կեանքը իր երիտասարդա-
կան աշխուժովը կը կենդանացնէ : Սի-
նասն ալ բոլորովին ոգի կ'առնու , ինչ
պէս թէ որ ծերացած ծառի մը բու-
նին վրայ նոր պատուաստ մը ընեն ,
իսկ Վրիգորիկը , անտարակոյս աստե՛նօք
առաքինի ռ. քաղաքակիրթ մարդ մը
կ'ըլլայ :

Սիլ պատանեակք , դուք հիմայ ար-
գելք մը չունիք ու աշխոյժ էք , բնու-
թիւնը զձեզ կը զուարթացնէ , արտու-
րէից կենդանութիւնը զձեզ կը մխի-
թարէ , մարդաց ծաղկազարդ կանան
չութիւնը , անտառաց քաղցր ստուեր-
ները , վերջապէս ամեն բան այս հա-
սակներնուդ մէջ ձեզի զուարթ կ'ե-
րեւայ , եւ բիւր ապագայ ուրախարար
յոյսեր ձեր միտքը կը գրաւեն . բայց
ստե՛նը կուգայ որ տարիներուն շա-
տութեանը հետ մտածութիւններ ,
հոգեւ , տկարութիւններ կըսկսին վը-
քանիդ տիրել . վերջը եթէ լաւ ապրիք՝
կը ծերանաք . Բնչպէս կը փափաքիք
ուրե՛մն որ ան աստե՛ն ձեր հետ վարուին :

Օ՛ր .

Ե Կ Ե Ղ Ե Յ Ա Կ Ա Ն Ք

Քահանայք Մատուծայ կամաց
թարգմանքն են եւ միջնորդք Մարտին եւ
մեր մէջը . որոնք առաքինութեամբ եւ
գիտութեամբ լցեալ , խոհեմական եւ
ուանդեամբ ճշմարտութիւնը կը տա-
րածեն , ստութիւնը կը խափանեն եւ
զմարդիկ իրենց փառերէն կըղգուշա-

ցընեն : Մտանեաց քաղցրութենէն կը
հրաժարին վարդապետք , որ Վրիտու-
սի որդիքը իրենց ընտանիք ընեն , ազ-
քատներն իրենց օգնութեան կը դի-
մեն . տարակուսեալները խորհուրդ կը
հարցընեն , հիւանդները իրենցմէ մը
խիթարութիւն կը խնդրեն , իրենք եւ
որ յանուն Մատուծայ՝ հզօրագունից
ճշմարտութիւնը կը քարոզեն տգէտնե-
րը կը կրթեն , հարստահարեալները կը
պաշտպանեն , թըշնամիները կը հաշ-
տեցընեն , ամպիոնէն ընդհանրական
պարտքերնիս մեզի կը քարոզեն , Կե-
խոտովանարանէն ալ նայն ընդհանուր
պարտքերը առանձին իւրաքանչիւրին
թերութեանը համեմատ կը սովորեցը-
նեն . քահանայք զմեզ մկրտելովն
եղբայրակից ըրին քրիստոնէից , եւ քա-
հանայք պիտի ըլլան մեր մահուան
անկողնայն քով կեցողները , եւ նաեւ
մեռնելէս վերջն ալ իրենք պիտի օրհ-
նեն ու օգնեն մեզի : Ի՛նչ մեծարեցի
մարդիկ . Բնչ երկնային պաշտօն է ի-
րենցը :

(Պֆի շարունակութիւն)

Հետեւեալ նամակը , որ բաւական
նին հարցասիրական գիտողութիւններ
կը պարունակէ Սիօնի նկատմամբ , ար-
ժան կը համարենք հրատարակել , որ-
պէս զի մեր Մ. Բ. Գ. Կ. նամակագիրը հա-
մուռի , որ Սիօնը բարեկամական դի-
տողութիւնները սիրով իւր էջերուն
մէջ կ'առնու , իսկ թէ ինչու Սիօնը
քանի մի ազգային խնդիրներ ազատ
քննութեան չենթարկեր , այդ մասին ,
եթէ բարեպատեհ առիթ ունենանք ,
առանձին կը խօսինք :

..... Խոհապիրք Սիօնի ,

Բաւական ժամանակ է որ ժող-
դիր էի ձեզ հետ խօսակցիլ , բայց թէ
անձնական զբաղումէս եւ թէ այլևայլ

հետաուսներէ ստիպեալ ականայ լռած էր : Այս անգամ կուզեմ ամեն արեգեւթ մէկ դի ձգելով գրել Ձեզ, ինչ որ Վիտի ծնած օրէն կը մտածէի. սա կայն չգիտեմ թէ լսելիքներս լոյս պիտի տեսնեն : Թէ գրուանի ասի պիտի պահուին : Վիտի անօրէնութեան անկողնէ չի գիտնարուս համար եւեւ լոգդ կը համարիմ՝ հրատարակելիդ խնդրելու : Գուցէ իմ գրութեանս մէջ բան մի գտնուի որ ընդդէմ լինի Ձեր կանոններուն կամ տեղւոյդ հանգա մանաց, ուստի ազատ է չհրատարակել, բաւական է, որ դուք կրկարգաք, Ձեզ գրողը՝ Ձեր ճշմարիտ բարեկամն է, ինչպէս դուք եւս խտտովանած էիք Վիտի յառաջաբանին վերջերը :

Վիտի ծնունդը շատերու ուրախութեան և միջթարութեան պատճառ գարձաւ : ամեն մարդ մեծամեծ յոյսեր տածեց իւր սրտի մէջ, գիտնալով որ Վ. Հակոբեայ վանքն իւր ազատ ու անկախ դրիւքը կարող պիտի լինի շատ պարագաներու, մէջ մեծամեծ գիւտներ մատակարարել ազգին, խօսելով տղատօրէն կրօնական, օւսուած նախան և ազգային խնդրոց վերայ այնպէս : ինչպէս կը պահանջէն ժամանաւ կիտ պարագայները : Վակայն մեր այս յոյսը մինչ ցարդ ապարդիւն մնաց, որուն պատճառն դեռ անծանօթ է մեզ : Վ. ասն զի չը գիտենք ինչու կրօնական թերթ մի կրօնքի վերայ չի պիտի կրնայ խօսիլ, ինչու ազատ չի պիտի գրելու ազգային ամեն խնդրոց վերայ : Եթէ բոտ ոմանց, անձեռն հաս է բռնեք զկրիստոսիք և վանն զի երբեմն խիստ աղէկ գատողութիւն և հասուն խորհրդածութիւններ կը պարունակէ Վիտը, որով կերեւի թէ ձեռնհաս էք գրելու ինչու ուրեմն կարճ առաջներու և ծածկութիւն ասկէ կըքաղարկէք խնդիրները : ինչու պարզ խօ-

սելու տեղ երբեմն այլաբանութեամբ և երբեմն առական կ'ուզէք իմացը նել :

Բարեկամք, ազգին վերջերք մեծ են, այդպիսի փորձիկ և փափուկ խաբաններ չեն օգնէր, ճշմարտութեան սուր և սիրոյ յանդիմանութեան հուր կ'ուզէ որ բժշկութիւն գտնէ :

Եւ այդ ներքին է ինձ հարցնել վերստին՝ թէ ինչու չէք խօսիր ազատ և համարձակ Պօլսոյ Պատրիարքութեան խնդրոց վերայ : ինչու լռեցիք ու դեռ կը լռէք Սրայ և Երթմարայ կաթողիկոսութեան վերայ, (որուն մեծ զորք կողութիւն բրաւ ամենապատիւ Եսայի Ս. Պատրիարքը կաթողիկոսութիւնը չընդունելով) : Ինչու հիւանդանոցի նկատմամբ բան մի չէք բեր : Եւ համարձակութեան համար ինչ կարծիք ունիք :

Վիտը անաշխարտութեան և անկողն մնասիրութեան առաջնորդ պէտք էր լինիլ ուրիշ թերթերու : Բնէ է Վիտի երկիւղը, այս մեզ անծանօթ է, բայց և անցնիք : Եւ այդ միթէ նահատակութեան աշխարհին մէջ ծնող և սնող Վիտը, քրիստոնէութեան նահատակութիւն լինելը ճանչցող Վիտը, և նահատակութեան մէջ փրկութիւն տեսնող Վիտը, պիտի վախնայ վարձուած զինուորներէ : Եւ այս պիտի տայ երկչոտ մարդիկներէ : որք խաւարի մէջ թակարթ բարեւէ ուրիշ քաջութիւն չունին : Ինչ է Վերաժանի մի արժանի վարձքը : — հրացեալ շամիր, սուր և ազատ : Ինչու կը թողուս որ վրաց խորխոսայ, ինչու կը ներես որ իբր ապկար երգիծանէ : Ինչ պիտի լինի անհոգի մարմիններու հասցնելը չարիքը : (Վ. ասն զի արդարութեան դէմ զինողը ճշմարտութեան հակառակողը և անմեղին զինանք հասցնելու գողը քանական հոգւոյ տէր չէ :

հրէշ է) ։ Արդ՝ եթէ դուք եւս չա
բխումք հալածեալ ախարսիները, չը
շահատակիք այդպիսի գաղտնի թշնա
մեաց դէմ, ալ ուրիշ օգնութիւն չու
պատենք ։ Յաւ է մեզ արդարեւ որ
դուք եւս նկատումներ կ'ունենաք ։
Ով որ մնասելէ կը վախէ, նա լի շահիր
և միթէ ճշմարտասէրը առանց մնա
սու կրնայ յաղթանակել, չէ՛ որ իւր
փառքը մնասուն մէջն է ։ Օտրմանա
լու բան, թշնամին ազատ կը լինի
կեղծ ու խորդախ ձեւերով իրաւունք
տոանալ (բայց ոչ ճշմարտասիրաց առ
ջեւ) ։ Իսկ դուք չարիքէ վախճելու
համար կը կաշկանդուիք և խօսելու ա
ղատութիւններ կը զոհէք ։ Մտածե՛րս
եթէ այլք չի հասկանան, յուսամ թէ
դուք կը հասկանաք, ինչու որ Չեք
այս տառաջ Սիօնի յառաջաբանին 4 հ
րես ։ 1 էջի 27 տողէն մինչեւ 13 տողը
առիթ տուին ինչ այս վերջի բանի մի
տողս գրելու, հիմա անցնինք ուրիշ
նիւթի ։

Ճամանակաւ վարդապետներ եւ
թրհնատաւորներ կային, սրբ իրենց
գիտցածը մարդու չէին ուսուցաներ,
մինչեւ որ իրենց գաղափարին յարմար
մէկը չը գտնէին ։ Եթէ յարգէին գրու
նելու անգամ, երկար տարիներ չարաւ
չար աշխատցնելով սիրտը և միայր կը
գերէին, ամիսը մի ամենափոքր բան աւ
սուցանելով և զայն մեծ բանի տեղ
դնելով կը պարտաւորէին աշակերտը ։
որ բնաւ մարդու չըսէ, այսպէս չա
րանակելով մինչեւ սր իրենց վախճա
նը կը մօտէր, կամ գործելու անկարող
ըլլալին կը գգային, այն ժամանակ
կ'առանձնանային աշակերտին հետ ։
երգմամբ խոստումն կ'առնէին անկէ, ։
որ այլոց չը սիրի ուսուցանէ ։ Երբ
կ'սկսէին բռն արհեստը կամ ուսու
մը սովորեցնել ։ Այս պատճառաւ այն
նաեւ պատուեցնելը մատով ցոյց կը

տային ։ Իսկ հիմայ (ինչպէս ըսաւ մէկը)
որ կողմէ դառնաս, պատուեի, արհես
տաւոր և վարժապետ կը տեսնես ։ Բ
սեւ է թէ հիմա գիտութիւնները հը
րապարակ ելան, ուղղոյն ու աշխատե
ղը կարող է լիւր ։ ժամանակի մէջ իւր
բաղձանքին հասնիլ, հետեւեալպէս գի
տուն կարծաւիլ ։ և ուրիշներէն պաշ
տուիլ ուղղներուն վարկն կոտորած է
հիմա ։ Սոսն զի իրենց գիտել կար
ձածը իրենցմէ, փորձելէն կ'արհամար
հուի և սուտ ու սխալ ըլլողը կը յան
գիտանաի ։ Ասոնց կարգն է հիմա օրաւ
ցուցի արհեստը, որ որդւոց որդի
ժառանգ մնացած է ։ Այժմ ։ Երբ
ցոյց չի տող Պօլոյ մէջ մի հատ լինե
լով ։ Թէ յարգ բռնի և թէ վատակ
աւատի հարկաւ սիրի ընդգիտման, և
չիտակը խօսելով ազան ծմարդու մի
ձեռք այդպիսի գիտութիւն անցնիլ ։
մեծափառութենէ զատ ուրիշ թե՛
կարող էր ընել, մանաւանդ որ ինքն ալ
այնպէս ուսած էր ։ Եթէ դուք գիտ
նաք որ օրացուցական խնդիրը նոր չէ ։
անչաւ շտ չի պիտի վարմանաք ։ Վասն զի
Տէր Արեմիա հայրը ժամանակաւ ազ
գին ալ խաբած է ։ Երբեմն Պօլոյ
Պատրիարքարանի մէջ գերազոյն ժող
վոյ երաշխաւորս թէր խոստացաւ իւր
որոշած կետարացի պարկեշտ անձի մի
սովորեցնել, սակարկութիւն աւալայման
ները եղան գրեթէ ճիշդ այդ կերպով ։
սկսաւ ուսումը շարունակել ։ մինչեւ
այն կէտը ։ Եւ որ օրացուցի արուես
տին գաղտնիքը կը բովանդակուէր ։
Այն տարին Արապեանը չը գիտեմ որ
բինակն ուրիշ առնելով, օրացոյց հը
րատարակեց ։ Տէր Արեմիան առիթ
բռնելով որ իւր աշակերտը օրինակ
տուած է ։ բողոք ըրաւ ։ պատրիարքա
րանի մէջ գտնեց ։ աղապակեց քաւա
ռունք պահանջեց ։ և վերապէս իւր
պօռոցներովը յաղողեցաւ ։ Եւսած գրամը

մարտեւ և նորհեպոտիմ քաղաքները գաղ-
րեցնել, իսկ Բնէ կը զարմանաք, Կա-
ճեղ եւս նոյն գերը խաղցեր է, գութ
գոհ եղիք որ երեք տարուան օրացոյց
կարող եղաք հանել, այն խեղճը և ոչ
մի տարուանը կրցաւ չննել, հաշիւներ
ընելով գլխար կը ճայթեր և կէտ մի
կար, որ եկածին պէս ոգեմաշ հա-
ռաչանքներ կը հանէր սրտէն, Վասպի-
սի և այլապի տնիքառութիւն ընողը
կը յուսաւ որ ժամանակէն գոհ լի-
նի, Վներեւոյթ չարդարութիւնը, որ
նախախնամութեան ձեռք կը հսկէ
տիեզերիս վերայ, անշուշտ պիտի
սրտովէ այնպիսիին սիրող անբաւական
նախորութեան ձեռք թողլով, Վրանի
թէ Նստուծոյ արդարութիւնը ուրիշ
ներուէ բարոյող մարդիկ նոյնը իրենց
վերայ եւս գգային, բայց Տէր Վրե-
միս հայրը կը կարծէ, որ ինք, օւրիշ
ներէն կը փնտռուի:

Վաւ սակայն գութ մի զարմանաք,
որ օրացուցական խնդիրներն հրապա-
րական քննուելու կարեւորութիւն
պատգամ են, այլ զարմայէք որ ինչպէս
մինչ ցարդ ազգը որ եւ իցէ կերպիւ
այս բանիս մէկ հնարքը չէ գտած կամ
գտնելու չէ աշխատած: Վայց Բնէ կ'ը-
սէմ ձազքը այնչափ խնդիրներ ունի
լուծելու, որ գլուխը քերելու ժամա-
նակ չունի, առեւտրական խնդիր, ըն-
դանեկան խնդիր, գաւառական խնդ-
րի, կաթողիկոսութեան խնդիր, ի-
րաւագութեան խնդիր, հիւանդանո-
ցի խնդիր, դպրոցներու խնդիր և
նազարականներու խնդիր, վերաբեր-
նութեան խնդիր, և և վերջապէս
Թողութեաններու հրաժարման և ըն-
տրութեան խնդիր, որ ութ տարի
է և գեռ չը լրացաւ ու կարգի չը
մտաւ: Վրդէն մենք այնչափ հաւատ-
արի ենք որ այս օրէն անգին չենք մը-
տածեր, Վաթողիկոս կամ Պատրիարք

կ'ընտրենք, յետոյ անոր գործոց չենք
հաւիր, անորման կը դատիրք, իսկ
անոր արժանաւոր յաջորդ պատրաստել
չենք խորհիր, իբր թէ նա անմահ է
և մենք ընտրելէս վերջը ուրիշ գործ
չունինք: Սոցա վերջը չի գար, ներե-
ցէք որ երկարեցաւ խօսքս, քանի մի
խօսք ալ ուրիշ նիւթի վրայ ընելով
վերջացնելու եմ:

Վարդն կենդանեաց կատարելու
գոյնն ըլլալով, ամենուն բնութիւնն
ալ ինքն ամբողջ ունի, սակայն այս ա-
մեն գազանութեանց ժողովին վրայ
բանականութիւնն է իշխող և կառա-
վար, երբ բանականութիւնը բնազդ-
ման թերազրութեամբ գործէ, այն
տեղ ուղղութիւն մի բնութեք, հոն
մարդը չի գործեր, այլ կենդանին, ինչ
պէս Ձեր դպրոցէն արձակող աշա-
կերտք, սրբ կ'երեւի թէ լրբութեան
մէջ բաւական յաջողակ են եղեր և
որ համարձակեր են այն բարձրաստի-
ճան պատկառելի անձանց դէմ անբա-
նօրէն այդ տնդամութիւնը գործել-
ուրեմն կ'երի թէ գաղաններէն ամե-
նէն չարագոյնն են եղեր դորա, որ զի-
րենք խնամող պատասպարող և պէտքե-
րը հոգացող բարերարին դէմ ալ այդ
աստիճան յանգեցներ են և Վրիշս յա-
ռաւ չերթար այս մասին աւելի բան
գրել, վասն զի մտածելն անգամ բա-
նականի մի սոսկումն կը բերէ, թող թէ
գրելը, բայց Բնէ է պատճառը, որ կը
համարձակին այդ ծայրայեղ ապաշնոր-
հութիւնը գործել, իրենց պարգե-
ւը փորրիկ է եղեր, սակայն պէտք է
ին խորհիլ որ այդ տեղ անցուցած օ-
րերնուն մէջ բոլոր ընդունանքն ըն-
ծայէր, կ'երեւի թէ այդ թերամիտնե-
րն իրենց վրայ մեծ համարումն ու-
նին, երբ մարդ իւր չափը և արժէքը
չի ճանչնայ, անկէ աւելի թշուառ և
անպիտանը չի կրնար ըլլալ:

Պարտիզի մի մէջ վարդենի մի կար, որուն մօտ կակաչ մի ևս կար. օր մի երբ տանտիկինը վարդենւոյն մօտեցած փռնէ կը կազմէր և սիրային ժը պիտով ու քաղցր զմայլմամբ կը հօտտէր, կակաչն համբերութիւնը հասնելով նախատեց զվարդենին և քամահրեց զտանտիկինն, համարելով զայն իբր անարգար և վայելութիւն չի ծանցող. իթէ այդ փռնջին մէջ ես ևս գտնուէի, բաւ կակաչը, որչափ գեղեցիկ տեսք պիտի ունենար, իմ ինչս պակաս է, կ'երդնում որ վարդէն աւելի պայծառ է գոյնս և հոտս ալ աւորմէ ասործելի. սակայն ասիտս որ մարդիկներէն չեմ յորդուիր. խռնարհ մանիշակը պատասխանեց, բաւրեկամ մեր արժէքը մենք որոշելու չենք, վասն զի մեր թերութիւնը կամ չենք տեսներ, կամ չենք ուզեր տեսնել մարդիկ, որ զմեզ կը նկատեն, նոքա կաբող են որոշել մեր լաւ ու վատ հանգամանքները. ինչուն կը տրտնջաս, երբեմն դու ևս քու չափովդ կը յարգըւիս, սակայն վարդին ընդունածին չափ յարգանք մի պահանջեր. լայս միջոցին տանտիկինն արդէն իւր փռնէ ջը կապած էր, զատուեցաւ վարդի նիին քովէն, կոխեց կակաչը, և մանիշակին թուփը տեսնելով խոնարհեցաւ և անկէ ևս քաղելով խառնեց իւր վարդերուն հետ և զուարթ ու գոհ սրտով մեկնեցաւ. յոյն առակը մեկնել հարկ չէ, վասն զի պարզ է և վասն զի խօսքս ալ երկարեցաւ. ընդունեցէք առ այժմ յարգանքս, այս ճամբորդութեանս մէջ օր մի գուցէ առիթ ունենամ ձեզ հետ խօսակցելու.

Ալեքսանդրիս
1869 Մարտ 15

Սարգիս:

ԺԸԹՈՒՅՍ ԹՎԱՆԳԱՐԱՆԻՆ ՀԵՄԵՆԵՐ

Ետիճանաւոր Գէորգ Խաչատուրեան Նարութիւնեանց Լորեանցի Հին Երկրագործական Նուէր զրկած է Ս. Եթուոյս Թանգարանին հետեւեալ գրեանքը.

Սուսերէն պատմական յիշատակարանք Հայոց, 3 հատոր.

Կրօնագիտութիւն

Արեազան պատմութիւն } Սալանթեան
Վերականութիւն }

Գոթողեայ Լղերբերգութիւն.

Կանոնք և կարգադրութիւնք Լազարեան դպրոցի.

Սոյն նուիրատուութեան համար հրապարակաւ կը յայտնենք մեր շնորհակալութիւնը.

— Եթուոյ վերջերը Ս. Քաղաքս հասն Ննդկատանէն Սեմ. Կաւիթ Գօսն Ենդղիացին և իւր ազնուափայլ ամուսինն, որ դուստր է մեր հնդկաբնակ հայազգի մեծահամբաւ Լազարեանին.

— Ս. Եթուոյս միաբան Լրժ. Երսէս Գ. վարդապետն, որ Ննդկատան կը գտնուի, իւր խոհեմ վարուք արժանացած է տեղական Հայոց մեծ համակրութեանը, որոյ մասին Կաւիթա յի ազգայինք յատկապէս խնդրած են Օտտիական տօնը նոյն քաղաքի մէջ կատարել. Գոհ ենք մեր հնդկաբնակ Լազարեաններէն, որ այսչափ կը յարգեն իրենց պանդուխտ այցելուն.

— Ս. Եթուոյս միաբան Լրժ. Լաւրաւանատուր վարդապետն ուղեւորեցաւ յԱգիպտոս Եթուապատկան կառնածոց վերահասութիւն գործելու համար.

Պնդաղարեան Ղուկաս աղա :
 Պոլաղարեան Պաղտատար աղա :
 Սաւարանեան Զանիկ աղա :
 Սրվաճեան Բովանդեան աղա : (ժամն Արշակունեան
 վարժարանին Ագրիանուպոլսոյ :
 Սուրբանեան մահտեոյ Գեորգ աղա :
 Սյարգսեան մահտեոյ Եղաւոյ աղա :
 Վարդեմեան Զահրա աղա :

ԷԼՄԻԱԾԻՆ

Տ. Տ. ԳԵՈՐԳ ՎԵՆԱԿԻՆ Կաթուղիք (2 օրի) :
 Գեր. Աջրեան Եղիսիպոս :
 Գեր. Պետրոս Եղիսիպոս :
 Աթ. Թադէոս վարդապետ Չիւնակեան :
 " Սարգիս վարդապետ տեր Գապարեան :
 " Գրիգոր վարդապետ Մուշեղեան :

ԹԵՔՐԻՏԱՂ

Գեր. Թադէոս Սրբալան Արքեպիսկոպոս Առաջնորդ :
 Տ. Արիստակէս քահանայ Ֆեւլեան :
 Տ. Վրժմեան քահանայ :
 Գեորգեան մահտեոյ Տօնիկ աղա :
 Փիլիպպոսեան մահտեոյ Զահրա աղա :

ԹԻՖԼԻՉ

Գեր. Մակար Սրբալան Արքեպիսկոպոս Առաջնորդ
 Վրաստանի Ե Եփեսոսի :
 Աթ. Սուքիաս վարդապետ Պարզեան :
 Տէր Խաչակ աւագ քահանայ Սահառունի :
 Տէր Մովսէս աւագ քահանայ Սայաճեան :
 Տէր Մկրտիչ աւագ քահանայ տեր Գրիգորեան :
 Տէր Բովսէփ աւագ քահանայ Օրբելեան :
 Տէր Ղազար աւագ քահանայ Դաւթեան :
 Տէր Բովանդեան աւագ քահանայ Արարատեան :
 Տէր Սրայիմ աւագ քահանայ :
 Տէր Գրիգոր քահանայ տեր Բարսեղեան :
 Տէր Թադէոս քահանայ Սոսլանիսեան :
 Ղեւոնդ երէց խորապետ — Ներսիսեան Վարժապետ :
 Արիստեան խաչատուր աղա :
 Չոբարեան վարդապետ աղա :
 Էնֆիանդեան Հովսէփաւոս աղա :
 Էնֆիանդեան Աւետիք աղա : Գրաւաճառ :
 Լազարեան վարդապետ աղա :
 Դաւիթեան Բովանդեան աղա :
 Պետրոս Սիւնճեան, խոյ. Մեղիքի Հայաստանի :
 Ռոտմեան Պ. Մարկիանոս, բժշկապետ :
 Ռոտմեան Աւերամբեր աղա :
 Սերոբեան վարդապետ աղա :
 Վարդանեան մահտեոյ Գրիգոր աղա :
 Բալարեան Պ. Կարապետ, բժիշկ :

ԱՆՈՒՆԻՅԵ

Աթ. Չապարիս վարդապետ :
 Գեր. Պետրոս վարդապետ Առաջնորդական փոխ :
 Ստեփանեան Զարուհի աղա :
 Նուէր Սեւտեան ընկերութեան Դ Մահտեոյ Առաջնորդ աղա :
 Ստեփանեան վարդապետ Գրիգորեան :

ԿԱԿԱԹՈՍ

Տ. Բովանդեան Ա. Խաչանի քահանայ խաչիկեան :
 Տ. Գրիգոր քահանայ մահտեոյ Մարտիրոսեան :
 Տ. Եղիսիան քահանայ Հ. Գրիգորեան :
 Պ. Բովանդեան Ավագեան :
 Պ. Բովանդեան Մեղիքի (2 օրի) :
 Պ. Կարապետ Մ. Դաւթեան :

Պ. Գեորգ Բովանդեան, զարդոյ Զուգար (2 օրի) :
 Պ. Մարգար Գրիգորեան :
 Պ. Մանուկ Թ. Մանուկեան :
 Պ. Խաչիկ Թ. Ավագեան :
 Պ. Զարուհի Գ. Ավագեան :
 Պ. Խաչիկ Թ. Աւետմեան :
 Պ. Թադէոս Տէր Ստեփանեան, հայկաբան գաղտնաւոր :
 Ի Կաթուղիք Մ. Զեմարանի :
 Պ. Կարապետ Գ. Մովսէսեան :
 Պ. Կարապետ Մ. Զարուհի Զեմարան :
 Պ. Մկրտիչ Տ. Բովանդեան Գալատեան :
 Կաթուղիք Մարգարեան Զեմարան Հայոց :

ԿԱՐՏԵ

Գեր. Զարուհի Աթ. Եղիսիպոս :
 Տ. Բաւարեան քահանայ Ի Կրիշ :
 Տ. Կիւրիշ քահանայ Տ. Աւերամբերեան :
 Արարեկեան Պետրոս աղա :
 Բարեհամբար առաջնորդ Արմենեան :
 Գարգաշեան Բովանդեան աղա :
 Եղիսեան մահտեոյ Փիլիպպոս աղա :
 Էնֆիանդեան Աւետիք աղա :
 Էնֆիանդեան Սարգիս Եփեսոսի :
 Հնարաւորեան մահտեոյ Մկրտիչ աղա :
 Կարապետեան մահտեոյ Զարուհի աղա :
 Հարապետեան մահտեոյ Մարգար աղա :
 Մահտեոյ Կարապետեան Զարուհի աղա :
 Մարգարեան Կարապետ աղա (ուսարար) :
 Մուշեղեան Զարուհի Եփեսոսի :
 Զահրեան Գեորգ աղա :
 Զարուհի Զեմարան Մկրտիչ աղա :
 Զարուհի Զեմարան Զեմարան աղա :
 Զեմարանեան Սիւնճեան աղա :
 Զեմարանեան Ստեփան աղա :
 Նշան աղա Եղիսիպոսի (վարժապետ) :
 Չափապաշտեան Բովանդեան աղա :
 Պոլաղարեան Մկրտիչ աղա :
 Պետրոս աղա Տիգրանակերտի :
 Սարգիսեան Գաւթիկ աղա զարար :
 Սրբիլեան Սարգիս աղա Վանիկ :
 Տէր Բովանդեան Նշան Եփեսոսի :
 Տ. Մուշեղեան մահտեոյ Զեմարան աղա :
 Փանոսեան Խաչատուր աղա :
 Փանոսեան Կարապետ աղա :

ԿԵՍԱՐԻՆ

Գեր. Ստեփան վարդապետ Ս. Դանիէլ վանուց :
 Գեր. Եղիս Զ. վարդապետ Առաջնորդ Երուսաղիմ :
 Թանգարան Կիւսիլույ :
 Թանգարան Կիւսիլույ :
 Թաւառ զարդոյ Արշակունեան Ընկերութեան :
 Նուէր Աւերամբեր Զահրա աղա :

ԿԵՅԵԼԵ

Տէր Գարիկ քահանայ Թորոսեան :
 Առաջնորդ Ղազարոս աղա :
 Գրիգոր աղա Պոլսեան Վարդանեան :
 Երամեան Առաքել աղա :
 Երամեան Զարուհի աղա :
 Էմմեան Գրիգոր աղա :
 Բովանդեան Սարգիս աղա :
 Ռազմեան մահտեոյ Ղուկաս աղա :
 Զոյակ աղա Կիւսիլույ (վարժապետ) :
 Բերդեան մահտեոյ Զահրա աղա :

ԿԻՊՐՈՍ

Աթ. Ղուկաս վարդապետ :
 Աթմանապոլիս Պոլսո վարդապետ :
 Դարդոյ Կիւսիլույ :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Աթմ. Տ. Տ. ԳՈՐԱՍ Սրբալան Պարտիք (2 օրի) :
 Գեր. Արիստակէս Եղիսիպոս :
 " Գրիգոր Արքեպիսկոպոս Ընկերութեան :

ՑԱՆԿ

ՄԱՐՏ

Ժողովարհ-ԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ — Գ. Քրիստոնէութիւնն իրեւ դաստիարակիչ — Դ. Քրիստոնէութիւնն իրեւ կրթիչ	49—57
Գրութիւնք Սամբէ վարդապետի Մամիկոնեան . .	58
Հաշուէցուցակ	60
Մարայրի ամպերը	62
Ազդ Հայոց	63
ԲԱՐՈՅՈՒՄԱՆ. — Մարիի ու Քաղաքակիրթ պատանի (շարանակիւ)	63—68
Կամակ Մէքսանդրիայէն	68—72
ԺԱՄԱՆԱԿԱՐԻԱՅԱՆՔ	72

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Սիօն ամէն ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ ռւթածալ թղթով.
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէքսիկէ հանդերձ Խառապարհի ծախքովը, Կանխիկ վճարելիք:
- Գ. Չստ տեսարանք առնել ազօր, պէտք է ամեն մէկ տետրին չորս գաւ հէկան վճարել: